



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lury ✓
334, 335, 336

~~328~~
~~K~~

~~621~~

~~329~~
~~328~~

2000.

Դ. ԱՂԱՑԵԱՆՑ

ԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՆՈՒԵԼ

ԱԶԳԱՅԻՆ ՎԵՊ

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ

(Լ. Բ. Ց. Ա. Ե. Ա. Ե.)

Բ ԳՐ-ՔՈՅՑ



ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսէս Կարբանեանի
տիֆլոս, տիգ. Մ. Վարդանյան, Տրոյն. թը. ճ. № 11.

1889

1653

Доз. ценз. Тифлисъ, 17-го Марта 1888 года.
Типографія М. Вартанянца, Тройц. пер. д. № 11.

28-334

335-1003



Ա.

ՄՏՍ.ԻՈՐ
ՑԵՂԱՇՐՋՈՒՄՆ

րութիւնն ու Մանուէլք
մտան Ներսիսեան Դրագ-
րոց, իբրեւ երթեւեկ աշակերտներ:

Ներսէս Կաթողիկոսի միակ ցանկութիւնն
էր, որ իր ուսումնարանը փայլի, եւ նա փայ-
լում էր մերթ պոչաւոր աստղի լուսով եւ
մերթ . . . լուսատրտկի: Երբ փայլում էր պո-
ջաւոր աստղը, աներեւոյթ անձինք երեւելի
ձեռքերով կտրում էին նրա պոչը, եւ այնու-
հետեւ փայլում էր լուսատրտիկը:

Արութիւնն ու Մանուէլք երբ որ մտան
դպրոց, այն ժամանակ փայլում էր պոչաւոր
աստղը, եւ արդէն մեծ պատրաստութեան
վրայ էին, որ կարեն նրա պոչը: Այդ աստղն

Էր Պ. Շանշեանցը, որ տեսուչ լինելով, մի եւ նոյն ժամանակ եւ մի օրինակելի դաստիարակ, ամենայն ձիգ թափում՝ էր ուսումնարանի փայլն աւելացնելու, բայց չէր կարողանում։ Այդ բանին արգելք էր լինում մի եպիսկոպոս, որ մեծ ազդեցութիւն ունէր Կաթողիկոսի վրայ։

Ներսէս կաթողիկոսին իր այդ ծերութեան ժամանակ խաբում էին անխողճ կերպով, եւ այնքան աւելի էին խաբում, որքան նա շատ էր հաւատում, որ ոչ ոք չի համարձակիլ իրան խաբելու։ Նրան խաբում էին իր նշանակած աշխարհական գործակալ գանձապետները, որոնք անգթաբար կեղեքում էին ժողովրդին, նրան խաբում էին իր ուսումնարանի հոգաբարձուները . . .

Ուսման առարկաներն էին այդ ժամանակ Հայոց լեզու, ընդարձակ, եւ կրօն իր բոլոր մասներով, ուստաց լեզու, մասամբ կամաւոր, եւ մի կտոր թուաբանութիւն, եւ այն էլ աւանդում էր յինական մեթոդով։ Դպրոցի բոլոր ջանքը երկու առարկայի վրայ էր դարձրած—կրօնի ու լեզուի, եւ այդ վատ չէր

այն ժամանակւայ ամենակարեւոր պահանջին նայած։ Այդտեղ հայախօս էին դառնում եւ լաւ գրում, կարդում ուտէախօս, չէրքեզախօս եւ վրացախօս պատանիք։ Մի երկրորդ լաւ բանն էլ այն էր, որ սովորութիւն ունէին բարձր դասատան աշակերտներին քարոզներ գրել տալու։ Ամեն շաբաթ կէսօրից յետոյ կարդացնել էին տալիս այդ քարոզները, որին շատ անգամ ներկայ էր լինում ինքը կաթողիկոսը մի քանի պատւաւոր հիւրերի եւ հոգաբարձուների հետ։

Տեսուչը հարցաքննեց Արութիւնին հայերէնից եւ կրօնից, եւ շատ բաւական մնալով ասաց. «Դու կարող ես երրորդ դասատուն մանել (այդ վերջին դասատունն էր, եւ ամենից բարձրը), բայց որովհետեւ տարւայ սկիզբը չէ եւ հասակդ էլ փոքր է, քեզ կընդունենք երկրորդ դասատուն»։ Իսկ Մանուէլին էլ նախ որոշեց առաջին դասատուն, բայց յետոյնրա հասակըն էլ մեծ համարելով՝ նմանապէս ուզարկեց երկրորդ դասատուն, ուր տասներեք տարեկանների մօտ երեսուն եւ քառասուն տարեկան տիրացուներ եւս կային նստած իբրեւ կամաւոր լսողներ . . .

Այսպէս կարգադրելուց յետոյ՝ Արութիւնին էլ պարտաւորեցրեց, որ օգնէ Մանուէլին, եւ խօսեց նրանց հետեւեալ խրատը.

Ուսումնարանը մի սուրբ աւաղան է, որից մենք մկրտում ենք կրկին, բայց մկրտում ենք ոչ ջրով, այլ Հոգովի Սրբով։ Դուք պարտաւոր էք ձեզ սուրբ պահել. սուրբ ու մաքուր պիտի պահեք մանաւանդ. ձեր լեզուն։ Լեզուվ ենք աղօթք անում մենք Աստուծուն, լեզով ենք խնդրում Նրա ողորմութիւնն ու շնորհքը։ Կարելի չէ սուտերով ու հայհոյանքներով աղոտուած։ Լեզով դիմել Աստուծուն, խօսել Նրա հետ, ինսդրել նրանից մի բան։ Ոչ։ Այն ժամանակ Սուտած չի լսիլ մեզ, յետ կը գարձնէ մեղանից իր երեսը եւ մեզ կը թողնէ անհոգ ու անխնամ, զուրկ իր ողորմութիւնից, իր շնորհքից . . . Ուրեմն այս ասածներս միտները պահեցէք եւ ձեր սիրտը, ձեր լեզուն մաքուր պահեցէք . . .

Սրութիւնը բարոյական խրատներ շատ էր լսած, բայց այս փոքրիկ խրատը իր բուվանդակութեամբ, եւ ասելու ձեւի շնորհիւ այնպիսի ազգեցութիւն գործեց նրա քնքուշ

եւ հաւատով ու ցերմեռանդութեամբ լի սրտի վրայ, որ քիչ մնաց լաց լինի . . .

Ցիրավի, մի կախարդական ազդեցութիւն ունէր տեսուցը բոլոր աշակերտների վրայ, թէ մեծերի եւ թէ փոքրերի։ Նրա շարժւածքը, նայւածքը, խօսւածքը, բոլոր իր անձնաւորութեամբ որոշում էր ոչ միայն բոլոր գաստիարակներից, այլ եւ քաղաքի ամբողջ հասարակութեան բոլոր մարդկանցից։ Նա պատկառելի էր թէ դպրոցում եւ թէ դուրսը, թէ Հայերի եւ թէ օտարների առջեւ, թէ զարգացածների եւ թէ տգէտների համար։ Նրա բնաւորութիւնից՝ իբրեւ մի օրինակ՝ մի անցք կարելի է բերել։ Մի չար աշակերտ կար, շատ չար, անուղղելի մի սրիկայ։ Այդ աշակերտին պէտք էր պատժել։ Այդ ժամանակ պատիժ կար, թէ եւ մեղմ, բայց վարժապետները տեսչից թափուն պատժում էին անխնայ եւ բարբարոսաբար։ Մի քանի վարժապետ եւ վերակացուք հազիւ կարողացան չար աշակերտին ներս գցել դահլիճը եւ գուռը ծածկել։ Դահլիճում, գրասեղանի մօտ նստած էր տեսուցը։ Երբ որ չար աշակերտին ներս մղեցին ուժով, տեսուցը

գլուխը չըբարձրացրեց, տղայի երեսին չընայեց,
չըբարկացաւ, լլյանդիմանեց, այլ քթի տա-
կին ինչ որ ասաց շատ մեղմ կերպով, որից
չար տղան կարմրեց ու սփրժնեց եւ ի վեր-
ջոյ այն աստիճան գառը դառաւ մի քանի
ռոպէի մէջ, որ ինքն իր կամքով գնաց պա-
հապանին ասաց, թէ տեսուչը հրամայել է,
որ իրան տասը զարկ տայ: Երբ որ պահա-
պանը պատրաստւում էր արդէն իր պարտա-
ւորութիւնը կատարելու, տեսուչն ուղարկեց
վերակացվին, որ յայտնէ նրան, թէ ներւած
է նրա յանցանքը . . . Այդ սրիկայ աշակերտը
վերջը գարձաւ մի օրինակելի աշուկերտ . . .

Մեր նորեկները նստեցան երկրորդ դա-
սատան առաջին բաժնումը: Մի քանի օրից
յետոյ Արութիւնը շուտով աչքի ընկաւ: Կրօնի
վարժապետ քահանան նրան տեղափոխեց երկ-
րորդ բաժնում: Նա սովորեցնում էր համառօտ
քրիստոնէական վարդապետութիւն եւ աւելի
եւս համառօտ սրբազն պատմութիւն, մինչ-
դեռ Արութիւնը Աստուածաշունչն ամբողջա-
պէս գիտէր, եւ իր սուր յիշողութեան շնոր-
հիւ ինչ տեղից էլ ուղենայիր, նա կըպատ-

մէր բառ առ բառ: Սրբազնն պատմութիւնը
սովորեցնում էին աշխարհաբար, իսկ Քրիստո-
նէական վարդապետութիւնը՝ գրաբար: Հին
վարժապետներն ընդդէմ էին աշխարհաբարի,
բայց տեսուչն արդէն մոցըել էր աշխարհա-
բար շարադրութիւնն եւ քարոզներ գրել տալը:
Նա ուզում էր, որ կրօնի բոլոր դասագրքերը
աշխարհաբար լինին, թարգմանել էր տալիս
եւ աւետարանը: Եւ բոլոր այդ բաներին շատ
խորթ էին նայում եպիսկոպոսն ու իր արքանեակ-
ները: Նրանք գրանում գտնում էին ոչ ողիղ
դաստիարակութեան մի ոճ, այլ կրօնական մի
նորամուծութիւն, օտար կրօնի հետեւղութիւն:

Հայկաբանութեան ուսուցիչն եւս գոհ էր
Արութիւնից, քանի որ նա գեռ լաւ չէր ցոյց
տըւել իր գրաբարագիտութեան աստիճանը:
Բայց մէկ անգամ՝ մի աշակերտ սիսալեցաւ,
եւ երբ վարժապետը յանդիմանեց նրան, որ
ինքն այդպէս չէ ասել, փոքրոգի աշակերտը՝
իր յանցանքը թեթեւացնելու համար՝ զրպար-
տեց Արութիւնին, թէ ինքն անցեալ դասին
ներկայ չի եղել, դիմել է Արութիւնին եւ նա
այդպէս է սովորեցրել:

—Հայ, ուրեմն բացի ինձանից՝ այստեղ ուրիշ վարժապետ էլ կայ, բացագանչեց վարժապետը եւ Արութիւնին դուրս կանչեց գրատախտակի մօտ, որ մի փորձով իր գիտութիւնը նրա տգիտութիւնովը փայլեցնէ։ Վարժապետն ինքը մի նախադասութիւն գրեց եւ լուծել տրւաւ բառ առ բառ իբրեւ մասունք բանի։ Նախադասութեան բայի դէմքը ուզիկ շասաց Արութիւնը։ Բայն էր «ասէն»։ Արութիւնն ուշ ըրդարձնելով է գրի վրայ, ասաց՝ «ասէն բայ ներգործական յոգնակի երրորդ դէմք» . . . Վարժապետն էլ այդ էր ուզում։ Էլ չստիպեց, որ Արութիւնն ուշադրութիւնն դարձնէ բայի կազմութեան վրայ, եւ ոչ գրաբար նախադասութիւնը աշխարհաբարի դարձնել տրւաւ նախապէս, որով կիմացէր, որ բայը եղակի է եւ ոչ յոգնակի, թէ՝ նոռն դիմորոշ տառ է. ոչ այս արաւ եւ ոչ այն, այլ յանկարծ Զամշեանի ահագին քերականութիւնն այնպէս թրիկացրեց Արութիւնի գլխին՝ որ նա վայր ընկաւ ուշաթափ։ Աշակերտներն իսկոյն ջուր հասցրին, ածեցին վըրան եւ այնքան շատ ածեցին, որ շինեցին մի անձրեւի

տակ ընկած լիսպոր ճուտ։ Դրանով վարժապետի գաղանութիւնը ջըմեղմացաւ, բայց Որութիւնի սիրտը քիչ էր մնում տրաքէր, իր կեանքում առաջին անգամ ստանալով վարժապետից մի պատիժ եւ այն էլ այդպէս խիստ եւ բարբարոսաբար։ Նրա պատւասիրութիւնը սասակիկ վիրաւորւեցաւ եւ այնուհետեւ սկսեց ատելով ատել այդ վարժապետին։

Հայկաբանութեան այդ վարժապետից շատ վախենում էին բոլոր աշակերտները եւ շատ էլ ատում նրան։ Դա վարժապետ էր եւ մի եւ նոյն ժամանակ գիշերօթիկ աւագ վերակացու։ Դա մի խաչագող էր Թմբուկ գիւղից։ Իր ուսումն աւարտել էր մի եւ նոյն նկրսիսեան դպրոցումը, բայց գպրոցը նրան չէր բարոյականացրել էր։ Նու ուսում չառած՝ գուցէ մի անշնորհք խաչագող կըլինէր, ոչ այնքան վտանգաւոր, բայց այժմ նա աւելի էր ճարպիկացել եւ աւելի հնար ունէր վտանգաւոր լինելու։ Յիրաւ նա արդէն իր լրտեսութիւնով եպիսկոպոսի հովանաւորութիւնն ու պաշտպանութիւնը գրաւել էր. նա արդէն հոր էր փորում տեսչի

Համար եւ ամենայն կեղտոտովթիւն եւ չարութիւն գործ էր դնում ուսումնարանումը, եւ . . . բռլորն էլ անց էր կենում, բռլորն էլ մարսում էր . . .

Ոռուսաց լեզվի այդ գասատան վարժապետը մի խելագար երիտասարդ էր: Դրա դասին ծիծաղ էր, որ այստեղից այնտեղից բարձրանում էր, որից խելագար վարժապետը աւելի եւս գժւում էր: Նա վերջը իսկապէս գժւեցաւ եւ մեռաւ:

Թւարանովթեան ուսուցիչը մի խենեշ արարած էր: Նա իր գասը թողած՝ նստում էր իր ընտրած կամ ընտրելի աշակերտի կողքին, ջերերը պտըրտում, գլուխը շփում . . . — Աշակերտներից շատերը այդ վորձերին ենթարկւելով՝ ամօթից լաց էին լինում. . . Կային եւ վարք ու բարքով ապականւած աշակերտներ, որոնք վարակում էին եւ ուրիշ շատերին:

— Այս ի՞նչ խայտառակովթիւն է, հարցընում էր Արութիւնը Մանուէլին, քանի որ դեռ նոր էր:

— Մեզ ի՞նչ, եղբայր, երեւի սրանց աղաթն

էլ այսպէս է, պատասխանում էր Մանուէլը, եւ այնուհետեւ լուսում էին երկուսն էլ, թէ ներսը եւ թէ դուրսը:

Դպրոցի բոլոր բարոյական եւ կրթական թերովթիւնները չէին կարող ծածուկ մնալ տեսչի նկատողութիւնից: Նա ուզում էր գուրս անել վատ վարժապետներին, բայց գուրս անել քը իս տոն է ա բ ա ր, առանց յայտնելու, որ նրանք այս կամ այն թերովթիւնն ունին եւ անյարմար են վարժապետովթեան: Նա մոռանում էր, որ քրիստոնէութեան հիմնադիրն ինքը այդպիսին երի համար խարազան ունէր ձեռին: Պարօն տեսչի քրիստոնէաբար վարւելու հետեւանքն այն եղաւ, որ ինքը մեղադըրւեցաւ քրիստոնէական ջերմեռանդութեան մէջ եւ քրիստոնէաբար հեռացաւ ուսումնարանից, իբրեւ մի քրիստոնեայ հերետիկոս . . .

Այսպէս հեռացաւ պոչաւոր աստղը եւ մէջ տեղ կրկն պծպժացին լուսատրտիկները: Նատ աշակերտներ հեռացան այնուհետեւ ուսումնարանից առանց ուսումն աւարտելու: Դրանց թւումն էին եւ Արութիւնն ու Մանուէլը, որոնք նոր էին փոխադրւել վերջին դա-

սատուն։ Դուքս եկող աշակերտներից շատերը
մտան արքունական ուսաւմնարան, նրանց օրի-
նակին ուղեցան հետեւել եւ Սրութիւնն ու
Մանէլը եւ հարցաքննութիւն տալու համար
սկսեցին պատրաստել տանը։ Մի քանի հայ
աշակերտներ գեմնազիայի վեցերորդ դասա-
տանից, դաս էին տալիս նրանց ձրիաբար։
Այս ժամանակ ահա մեր տղայոց համար, մա-
նաւանդ Սրութիւնի, բացուեցաւ մի նոր աշ-
խարհ։

Ուսուցանող ուսանողները մի առաւելու-
թիւն ունէին պաշտօնական վարժապետներից,
եւ այդ այն էր, որ նրանց յարաբերութիւնն
ընկերական էր, նրանց ուսուցումը մի օգնու-
թիւն էր։ Այստեղ ուսանողի ազատ մտած-
մունքը չէր ընկճում, այստեղ զարգանում էր
նրանց ինքնուգնութիւնը. այստեղ աշակերտի
մորի զբօսանքը արգելքի չէր հանդիպում։
նա չէր դըրւած մի նեղ վանդակի մէջ, այլ
մի ընդարձակ պարտիզի՝ ուր ամեն ծաղկից
հոտ առնելու իրաւունք ունէր եւ կարող էր
ընտրել իր ուղած ծաղկիր։ ծշմարիտ է, ու
մի շեղմունք է, որ կարող է հեռացնել մը-

տաղրեալ նպատակակէտից, բայց աճելութիւնն
այստեղ ընական է եւ կատարեալ ։ Նպատա-
կակէտին ըրհամնելը կամ ուշ համնելը մի դրժ-
բախտութիւն չէ, այլ բախտաւորութիւն, որով
հետեւ նա արհեստական է ու շինծու եւ չի
համապատասխանում մարդուս բնականապէս
զարգանալու օրէնքներին։

Ուսուցանող ուսանողները իրանք ցանկա-
նալով աւելի լաւ իրացնել իրանց սովորածը,
ցանկանալով վարժւել նաեւ դասաւանդու-
թեան մէջ, ծշմարիտ է խամսութիւն շատ էին
անում, նոր փորձեր էին փորձում, բայց առ
հասարակ պարապում էին շատ բարեխղճաբար։
Ազատ եւ տօն օրերին էլ աւելի շատ հոգով
զբոննելու էին գնում միասին, եւ այդ ժամա-
նակին էլ նրանց խօսակցութիւնը մեծ մասամբ
լինում էր կրթական, օրինակ՝ բացատրութիւն
բնութեան այս կամ այն երեւոյթի, մի պատ-
մական անցք, մի երեւելի մարդու կենսա-
գրութիւն, մի նոր գիւտի պատմութիւն, դա-
տողութիւն ժողովրդի մէջ արմատացած նա-
խապաշարմունքների մասին, որ նրանց աւե-
լի հեռու էր տանում, եւ սկսում էին հեշ-

տութեամբ լուծել վերացական շատ խնդիրներ, առանց կասկածելու, որ նրանց վրայ շատ փիլիսոփաներ են գլուխ կոտրել եւ գտել են անվճռելի: Ուսման հոտը մատաղ գլուխներն էր ընկել եւ մի քիչ հարբեցրել:

Հիմա պէտք է երեւակայել, թէ ինչ կզգար այժմ Արութիւնը՝ Ալբերտի աստւածաբանութեան տակ ճնշելուց յետոյ: Ի՞նչ կըդգայ մէկը, երբ չոր ու աւազոտ անապատում երկար թափառելուց յետոյ՝ ընկնի մի դալար հովիտ՝ լի ականակիտ աղբիւղներով, հոտաւէտ ծաղիկներով, բնութեան սմեն բարիքով եւ կենդանութիւնով, — ահա այսպիսի մի զգացումն տիրեց Արութիւնին: Բնութիւն եւ մարդ, որոնք մի բառով կարող են եւ կեանք անուանել, — ահա այդ կեսմքը չունէր նրա ստացած ուսմունքը: Բնագիտութեան անխախտ օրէնքները, թւաբանութեան ճիշտ կանոնները, պատմութեան երեւելի անցքերը, աշխարհագրութեան գեղեցիկ նկարագրութիւնները, բանաստեղծական սրտաշարժ գըրւածները, թէեւ փոքր սահմանի մէջ, իբրեւ մի փնջիկ միայն, բայց բաւական է մի մատաղահաս

եւ գեռ փոքր գլխի մէջ ահագին յեղաշրջում ձգելու:

Ես Արութիւնին այդ ժամանակ, — գուցէ եւ անյարմար, ըլհոգեբանական, — նմանացնում եմ աղբով պարարտացրած մի հողի, որի մէջ ընկած ամեն մի բեզմնաւոր սերմը կարող էր միոյն հարիւր տալ: Յիրաւի, ի՞նչ էին նրա մինչեւ այս ժամանակ սովորածները, ստացած տպաւորութիւնները, հաւաքած տեղեկութիւնները, լսած առակներն ու առասպեկները, եթէ ոչ ճշմարիտ ուսմունք աճեցնելու համար շատ օգտակար աղք, որ եթէ առանց բարիսերմի մնար, մոլեխինդ կըբուզյնէր եւ կապականէր նրա ուղեղը: Ոչ ոք իր միտքը չի յեղաշրջիլ, եթէ յեղաշրջելու ոչինչ չունի նա իր մտքումը:

Գիտութիւնով ճոխանալու պահանջը այնքան սաստիկ էր Արութիւնի մէջ, որ նա թէեւ գեռ անորոշ ու մութ, զգաց, որ մարդս կաարեալ մարդ չէ, եթէ նա չէ զարգացած մտաւորապէս այնքան, որքան որ ընդունակ է զարգտնալու մարդ արարածը իր ժամանակին: Բախտաւորապէս աճելութեան ընդունակ դար-

Ճառ լաւ միտք ունէր ինքը, թէ ի ծնէ եւ
թէ ծննդից յետոյ: Գտնւեցան մարդիկ, որ
թէ եւ անգիտակցաբար, այդ մտքի մէջ ձգե-
ցին բեղմնաւոր սերմեր: Ասում եմ՝ անգիտակ-
ցաբար, որովհետեւ շատ անգամ քամին ու-
ջուրն էլ են մի սերմ մի տեղից միւս տեղ
փոխադրում, շատ անգամ թուզուններն էլ են
մի եւ նոյն պաշտօնը կատարում: Նատ վար-
ժապետներ ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի տեղից
միւս տեղ մի սերմիկ փոխադրողներ:

Քանի որ ուսումը տրւում եւ ստացում
է փոխ առ փոխ, այդտեղ գիտաւոր առար-
կան անուշադիր է մնում, այն է՝ անհատի
զարգացումն, նրա մտքի բեղմնաւորվկը: Ման-
կավարժութիւնը ձգտում ունի այդ նպատա-
կին հասնելու, բայց գեռ հասած չէ. որով-
հետեւ ժողովրդների դաստիարակութեան զե-
կը մանկավարժութեան ձեռին չէ. նա մի
հրամանակատար է միայն, եւ ինչ լաւ բան որ
անում է՝ թաքուն է անում... Առ այժմ՝
քանի որ անհատը կարող է զարգանալ միայն
ինքնիրան, իր ներքին ուժովը, բաւական է՝
եթէ անկավարժը սամիկին այդ ներքին ուժը

ըթուկացնէ, ինչպէս որ թուկացնում են մեր
ժամանակումը՝ մանուկների թոյլ ուսերի վրայ
բարձելով անտանելի եւ անկրելի բեռն, որի
տակ նրանք ընկճում, ոչնչանում են:

Համադամ կերակուրները ում չեն դիւր
գալ, բայց դրա համար քաղց եւ ախորժակ
է պէտք, այլ եւ մարսելու ընդունակ մի ստա-
մոքս: Արութիւնն ուսման քաղց եւ ախորժակ
ունէր. նա անխոտիր կուլ էր տալիս ամեն ինչ
եւ մարսում էր: Բայց այդպէս չէր Մանուէլը.
Նա, ինչպէս կասեն՝ «ցեխծամ» էր տալիս.
ուտում էր ակամայ, եւ չէր էլ մարսում: Նա
շատ էր սիրում, որ բերանացի նրան պատմեն
զարմանալի, հրաշալի, զլւարձալի եւ առ հա-
սարակ սրտի վրայ ազդող բաներ, բայց միտքը
լծի տակ չէր դնում: Միտքը յոգնեցնելու,
վարժելու, ինքնուրոյնաբար մի բան սովորե-
լու արամագրութիւն չունէր: Նրա հակառակ
Արութիւնը մի բանի համառօտը լսելով՝ նրա
ընդարձակն ինքն էր սովորում: Նրա այս տրա-
մագրութիւնն այնքան կրթւեց եւ զարգացաւ,
որ ինքն իր վրայ բարկանում էր, երբ ու-
րիշից էր լսում այն, ինչ որ կարող էր ինքն

Էլ գիտենալ ու ինքն ասէր նրան։ Վերջապէս
Արութիւնն «ասողիկ» էր, ձգտում ունէր ասող
լինել՝ քան լսող, իսկ Մանուէլը այդ նախանձի
ցաւը չունէր. նա տրամադիր էր միայն շնելու
եւ դրանում էր գտնում նա իր ցանկութեան
լրում։ Մտքերի այս տարբերութիւնը նրանց
աւելի էր մօտեցնում եւ օրէցօր աւելի սերտ
սիրով կապում։ Մանուէլը հիանում էր Արու-
թիւնի ընդունակութիւնով եւ նրան պաշտելու
չափ սիրում։ Արութիւնն էլ տեսնելով Մա-
նուէլի առ ինքն ունեցած անկեղծ սէրը՝ եր-
ջանիկ էր համարում իրան, որ մի համակրտ
ունի եւ փոխադարձաբար սիրում էր նրան.
միայն ինքն իշխող էր համդիսանում միշտ,
իսկ Մանուէլն իշխուած։ Բայց այդ թւելի չէր
ոչ մէկին եւ ոչ միւսին, որովհետեւ յառաջ
էր գալիս ընականապէս եւ ոչ գիտութեամբ։
Երկուսն էլ ազատ էին ցուցամոլութիւնից,
մնափառութիւնից, եւ ապրում էին ինչպէս
մեծ ու փոքր եղբայրներ։

Բ.

ՍԿԻԶԲՆ ԵՐԿՈՒՑ



Էկ օր՝ կէսօրից յետոյ՝ Արութիւնն
ու Մանուէլը ման էին գալիս Խօջի
վանքի գերեզմանատանը, որ այն ժա-
մանակ Հաւլաբարցոյ միակ զբոսատեղին էր,
կարդում էին այս եւ այն գերեզմանագիրը,
եւ գոլում կամ փանում էին շարագրողին
կամ փորագրողին։

— Արութիւն, տեսնես աշխարհքիս մե-
ռենմէրը շատ կըլնին, թէ սազերը, ասաց
Մանուէլը նստելով մի գերեզմանաքարի վրայ։

— Քո տունը շինուի, Մանուէլ, բա էդ
էլ յըգիտե՞ս։

— Իմ մոռքով՝ պէտք է որ սազերը շատ
լինին. որովհետեւ մարդիկ տարէցտարի աւե-
լանում են, չո չեն պակասում. մէկ խօսքով
ծնողների թիւը շատ է, քան թէ մեռնողների։

— Զարմանալի մարդ ես դու, Մանուէլ ինչքան մեծանաս, Ելի պիտի երեխայ մնաս: — Ի՞նչպէս.

— Սում ես՝ ծնւղների թիւը շատ է՝ քանթէ մեռնողների, բայց չես մտածում, որ աշխարհի ստեղծւելուց մինչեւ հիմա ո՞րքան մարդիկ կըլինին հողի տակն անցած, որ եթէ յանկարծ վեր կենային՝ չէին տեղաւորվի հողագնդի վրայ: Վերցնենք՝ օրինակի համար՝ հէնց մեր քաղաքը: Ով գիտէ՝ քանի՛ անգամ կըլինի սա մեծացած, էլի ոչնչացած. ժանուարտ է գալիս, սոլ է լինում, պատերազմ է լինում, բայց գրանք էլ որ ջըլինին, բաւական է՝ որ բոլոր ծնւղները՝ շատ ապրեն թէ քիչ՝ պիտի մեռնին, բայց մեռածները նորմէկանց վեր չեն կենում . . .

— Ես լաւ չեմ հասկանում: Ինձ թըւում է, որ մարդիկ տարէցտարի շատամում են, չեն պակասում: Մեր գեղը առաջ տասը տոռն էր, հիմի գառել է քսան տոռն, էսպէս էլ ամեն տեղ:

— Դու սաղերը սաղերի հետ ես համեմատում: Ի՞նչպէս ես կարծում ուրեմն. եթէ

աշխարհիս երեսին մահ ասածըզ ջըլինէր, մարդիկը երկու էնքան կըլինէին, ինչքան հիմա կան, թէ աւելի շատ:

— Սպասիր մոտածեմ . . . Զէ, մեռածները շատ կըլինին, որովհետեւ՝ դու լաւ ասայիր՝ ծնւածները բոլորն էլ մեռնում են: Եթէ համարենք, որ մարդ շատ, շատ որ ապրի, հարիւր տարի պիտի ապրի. եթէ գրանից վաղ մեռնողնիրին չհաշւենք էլ, էլի բանից դուրս է գալիս, որ մեզանից հարիւր տարի առաջ սկսած մինչեւ աշխարհիս ստեղծւիլ ինչքան որ ծնւածներ են եղել, բոլորն էլ մեռել են . . . Ուշ . . . իրաւ որ ինչքան շատ պիտի լինին մեռածները: Զարմանալի մարդ եմ ես, Սրութիւն, սրանից հեշտ բան չի լինիլ, բայց չեմ կարողանում խկոյն հասկանալ: Մի աշակերտ էլ էն օրն ինձ մի բան հարցրեց, չիմացայ. յետոյ տեսայ, թէ ինչքան հեշտ է եղել:

— Ի՞նչ հարցրեց.

— Մի հասարակ ինդիր: Ասում է՝ «Եթէ հայրը քսանըհինգ տարեկան է, իսկ որդին՝ մէկ, քանի՛ տարուց յետոյ որդին հօր տարիքի կիսին կըհասնի, եթէ միասին ապրելու

լինին»։ Ասեցի՝ էդ ի՞նչպէս կարելի է։ Յետոյ որ բացատրեց, նոր խմացայ, որ կարելի է եղել։

—Ի հարկէ կարելի է։ Երբ որ որդին հօր ներկայ տարկըին համնի, նրա կիսի չափ հասակ կունենայ, որովհետեւ հայրը կըդառնայ յիսուն տարեկան, իսկ որդին՝ քսանըհինգ, որ յիսունի կէմն է։ Բայց քեզ որ անհնարին է թւացել, գրա պատճառն էն է, որ գեռ կիսի ու քանիպատիկ լինելու վրայ չես մտածել, այլ թէ՝ հայրը որ հիմի քսանըհինգ տարով մեծ է որդուց, միշտ էլ էնքան մեծ կըմնայ . . .

—Ճշմարիտ ես ասում, հէնց էդպէս էի մտածում։ Էլ միտս չեկաւ, թէ մի թըսի մէկէլ թըսից քանիսով շատ լինելն ուրիշ է, քանիպատիկ մեծ լինելն ուրիշ։ Էդ յետոյ խմացայ, բայց էլ ի՞նչ կօգնէր . . . Գիտես ի՞նչ կայ, Արութիւն, ես թւաբանութեան վրայ շատ էլ չեմ մտածում։ բան է էլի՛, թէ որ կըսովորեմ, —լաւ, թէ որ չէ, մի մեծ զրկութիւն չի լինիլ ինձ համար . . .

—Բա էլ ուրիշ ի՞նչի՞ վրայ ես միտք անում։

—Ես մտածում եմ, թէ ինչպէս անեմ, որ սատանի հաւատը չքացնեմ. . .

—Ի՞նչպէս թէ «սատանի հաւատը», երեւի ուզում ես ասել՝ «սատանին հաւատալը» . . .

—Ի հարկէ՝ սատանին հաւատալը. թէ չէ՝ սատանան ի՞նչ հաւատ ունի, որ չքացնեմ. . .

—Յետոյ, ի՞նչպէս ես չքացնելու.

—Ահա ինչպէս։ Երբ որ մենք հաւատում ենք էնպէս բաների, որ աներեւոյթ են, գերբնական են, մենք չենք կարող ոչ տեսնել լինքներս, ոչ ցոյց տալ ուրիշին, —պէտք է էն ժամանակը հաւատանք միայն էն էակներին, որ մեզ օգուտ են տալիս, իսկ վնասակարներին ըլհաւատանք, հերքենք, ըլնդունենք։ Օրինակ՝ ասում ենք՝ սատանայ էլ կայ, հրեշտակ էլ։ Սատանան մեր թշնամին է, հրեշտակը՝ մեր բարեկամը։ Եթէ հրեշտակը ճշմարիտ որ մեզ լաւութիւն է անում, մեր ազօթքը երկնք է հասցնում, մեզ չարից փորձանքից ազատում է, մեր հոգին սատանի ձեռից խլում է, արքայութիւն տանում, թող ուրեմն էդ բարի հրեշտակի կեանքը երկար պահի մեզ համար Աստւած։ Բայց սատանան, որ միշտ

մեղ խաթում է, փորձանկքների մէջ է գցում, որ մի ահագին լեզէօն ունի մեղ համար, ել քանը ասես, դեւ ասես, ալք, խթէթիշ, մեղնից լաւեր . . . թող ինքն էլ, դրանք ել չքվն, անհետանան. չքին մեր մտքից, լեզից, գրից. որովհետեւ դրանց հաւատալը մեղ վընաս է տալիս եւ ոչ օգուտ: Մի բան որ իսկապէս չըկայ, ել ինչու ենք հաւատում, քանի որ էդ հաւատալովը մենք մեղ հսմար մի նոր ցաւ ենք ստեղծում, մի նոր պատիժ . . .

— Մանուէլ, դու գեռ քու օրումը էդպէս խելօք բան չէիր մոածել: Ես ու իմ Աստածը՝ շատ լաւ ես ասում, շատ ուզիզ: Ի հարկէ՝ մարդուս տունը շինողն ու քանդողը նրա հաւատն է: Սուս հօ չի գրած Աւետարանի մէջ, թէ «Հստ հաւատոց քոց եղիցի քեզ»:

— Հիմի դու ականջ դիր, ես գրա հաւատալու վնասն ասեմ: Մեր գեղի տղէրքը շատ քաջ, շատ աներկիւղ են. ոչ թրից յետ կըկենան, ոչ սրից. մի տասը տարեկան երեխի էլ որ ասես, առիւծի բերան կրնկնի. մի խօսքով՝ տղէրք եմ ասում, որ Սամիստնը քեզ օրինակ: Բայց էդ սրտոտ տղէրքը գիշերները

գերեզմանատան կամ՝ մի քանդւած եկեղեցու մօտով անց կինալիս՝ որ մի ցից քար են տեսնում կամ՝ մի շրւաք, էդ հասարակ բաները նրանց աչքումն էնալէս բաներ են դառնում, որ չափաղանց երկիւղից սիրտները ճաքում է, լեզները պատուում, մի քանի օր չի քաշում, մեռնում են: Յետոյ ասում են՝ սատանէն տըւել է, այսինքն խրել է: Ասում էլ են, թէ խրած տեղը մեռլի վրայ երեւում էր, կապտել, ոեւացել էր: Էս չիք սատանէքը գործակալներ էլ ունին. գիտե՞ս ովկեր են դրանց հրամանակատար գործակալները:

— Զէ, էդ չեմ իմացել:

— Դու որտեղից կիմանաս. ես եմ նրանց անունը սատանի գործակալ գրել. նրանց ասում են՝ ցինդար, ցադուքեար, փալչի, գըրբաց, թասի մոիկ տըւող . . .

— Հա, դրանք գիտեմ ես:

— Բայց գիտե՞ս, դրանք ինչպէս են խաբում ժողովրդին, ինչքան վնաս են տալիս: Ժողովորդը ինչպէս որ սատանին է հաւատում ու մտքովը չի անց կացնում, որ սատանայ չըկայ, էնալէս էլ դրանց ասածին ու ա-

բածին է հաւատում: Մէկ անգամ մեր գեղը
մի գրքաց էր եկել «բախտի» գիր էր անում
մի երկին զօլօլակ թղթի վրայ, ու հինգ հինգ
մանէթով ծախում: Մեր մարդիկն էլ առնում
էին մէջքներին, կոներին կարում, որ բախտ-
ները բանի, լեզուները կարուկ ըլի, խօսքներն
անց կենայ մողրովի մօտ, դիւաններումք: Ի
հարկէ ոչինչ էլ չէր լինում, ամեն տեղից քօթ-
կում դուրս էին անում, բայց նրանք էլի
չէին կարծիք տանում, որ գրբայի թուղթը
ոչինչ զօրութիւն չունի: Եդ ջնդարը մէկ
երկու մարդի էլ ասել էր, թէ ես որտեղ որ
հին ժամանակներում թաղած փող ըլի, կը-
գտնեմ: Մեր շուտ ու հեշտ հարստանալ ու-
ղեցողներն էլ հաւատում են. ջինդարին տա-
նում են մի հին գեղատեղ, ասում են՝ էստեղ
պէտք է որ շատ փող ըլի, քարով որ խբում
ենք, դընդդընդում է. դէ գտիր, երեք բաժին
կանենք, մէկը քեղ, երկուսը մեր չորս հոգուն:
Ջինդարն ասում է, ես գեղեր պէտք է առ-
նեմ, պէտք է ճաշ պատրաստեմ գեւերի հա-
մար, նրանց սիրտը շահեմ, որ նրանք էլ իմ
խնդիրքս կատարեն: Բերէք մի երեսուն մա-

նէթ տըւէք, եթէ որ սուտ դուրս գամ, ձեր
փողն էլի յետ ձեզ կըտամ, դեռ մէկ էնքան
էլ կաւելցնեմ վրան: Մեր մարդիկը գնում
են մի տեղից պարտք անում երեսուն մանէթը
բերում տալիս իրան: Նա էլ մի երկու օրից
յետոյ նրանց հետ գնում է առաջւան տեղը,
մի թղթի վրայ մի քիչ բան է գրում ու շը-
պըրտում: Թուղթը քամումը մի քիչ դէս ու
դէն փոփուալուց յետոյ վէր է ընկնում մի
տեղ: Ջինդարն ասում է՝ դէ էդ տեղը փորե-
ցէք, փողն էդտեղ է. երկու կամ երեք ար-
շին որ փորէք, բաւական է: Եդ ասում է ու
ինքը գնում գեղը: Երբ որ մթնում է, (ցե-
րեկով չեն փորում, որ ոչով չըտեսնի) սկսում
են փորելը: Փորում են մինչեւ առաւօտ, բայց
բան չի դուրս գալիս: Ջինդարին տանում են
փորածները ցոյց տալիս, թէ՝ դու ինչքան որ
ասել էիր, մենք երկու էնքան ենք փորել, բան
չերեւայ. կարելի է մեր աչքին չի երեւում:
Եթէ որ դու տեմնում ես, հանիր մեզ տուր:
Ջինդարը գլուխիր թափ է տալիս, մի քիչ մը-
տածում, յետոյ ասում է՝ պէտք է քառասուն
օր սպասէք, եթէ երեւաց, — երեւաց, եթէ ոչ,

ես գրա ճարը կըդտնեմ: Մարդկանցից մինը
չի համաձայնում: ասում է՝ գու մեզ խաբե-
ցիք, սազ գիշերը բանեցրիր, հիմի էլ ուղում
ես վախչիս, մեր փողը հետդ տանես: Բեր
մեր փողը յետ տուր, թէ չէ՝ տեսնում ե՞ս,
քեզ կըդցենք էս մեր փորած փոսը, հողը վրեդ-
կածենք, գու կըմնաս էս գերեզմանումը, էլ
ոչովի չես խաբիլ . . . էս որ լսում է ջինդարը,
սաստիկ բարկանում է. «գու, ասում է, ի՞նչ-
պէս կըհամարձակիս էդպէս խօսք հանել բե-
րանիցդ. էս սահաթիս ձեռը բարձրացնեմ,
հարիւր հազար սատանայ կըդայ, քո մեծ պա-
տառն ականջրդ. կըժողեն, գիտե՞ս թէ չէ» . . .
էս սուտ սպառնալիքից էնպէս վախում են
մեր մարդկիը, որ ասում են. «Խալիկա, մեր
տրւած փողը քեզ հալալ ըլի, միայն թէ մեզ
մի վատ բան չանես» . . .

— Ո՞յ թէ խաբել է, հա . . . բացադան-
ցեց Սրութիւնը: Իրանց որդոց կարդացնելու
համար փող չեն տալիս, թէ աղքատ ենք,
ջինդարներին թումաններով են տալիս: Մա-
նուէլ, ես էդ ջինդարի գրերից էնքան ժո-
ղովել էի, էնքան արտագրել, որ ով գիտէ

մի փութից աւելի լինէր: Ոչովից չէի թաք-
ցնում. ամենքն էլ գիտէին, որ իմ վարժապէտն
էդ բանը լաւ էր իմանում: Բայց ես գործ
չէի դնում, վախենում էի. ասում էի՝ վայ
թէ սատանան իր գիշատեսիլ գէմքով առա-
ջիս կանգնի, լեզիս պատուէ:

— Զարմացք բան է, շատ անգամ հօ-
տեմնում են որ խաբում են, սուտ են ասում,
էլ ինչո՞ւ են հաւատում:

— Էդ էդպէս է, բայց շատ անգամ էլ
ուղիղ է թրւում: Որտեղ որ ըրկայ առողջ
գատողութիւն, ինչ մարդ որ հասուն խելք
տոնի, այլ երեւակայութիւն եւ վառ երեւա-
կայութիւն, նա խոկ եւ խոկ կախարդում է,
— սիրահարուում է, գժուում է, մինչեւ անգամ
առողջանում է: Էսպէս գէպքեր, թէպէտ
քիչ բայց պատահում են, էդ քիչն էլ բաւա-
կան է, որ մի հարիւր սուտ նրա հետ անց
կենայ:

— Ես էդ չեմ հասկանում:

— Ի՞նչ կայ յըհասկանալու: Դու ինքը-
ցասեցի՞ր, որ ձեր գեղի քաջ տղէքը մի շը-
ւարից վախենում են եւ սարսափահար մեռ-

նում: Եսպէս էլ մէկէլ բաներն իմացիր: Նա
էղպէս դէպքերում տեսնում է էն, ինչ որ
յրկայ: Նա ձայն էլ է լսում, թէպէտ ոչ մի
ձայն հանող ըրկայ: Նրա երեւակայութիւնը
խանգարում է, եւ ինչ որ պիտի զգայա-
րանքներից ստանար, երեւակայութիւնն է թե-
լագրում զգայարանքներին: Նա տեսնում է
գիշերւայ մթնումը մի հասարակ շըւաք: Նրա
երեւակայութիւնն էդ շըւաքից մի հրէջ է
ստեղծում, աչքն էլ էղպէս է տեսնում: Կար-
ծես շարժում լինի, երեւակայում է նա, եւ
մկում է շարժիլ. կարծես գլուխ ունենայ-
բանում է մի ահագին գլուխ. ի՞նչ երկայն
ձեռներ ունի,—ձեռները մեկնում են, օ . . .
ուզում է բռնել ինձ,—բռնում է, ընկնում
է հրէջի ճանկը եւ ուշաթափ վայր ընկնում . . .

— էդ ես հասկանում եմ: «Վախի աչքերն,
ասած է, մեծ մեծ կըլինին»: Բայց ի՞նչպէս
կարելի է սիրահարւիլ . . .

— էլի միեւնոյն կերպով: Նա լսում է, որ
իր համար սիրոյ գիր են արել: Նա հաւատում
է. երեւակայում է, որ արդէն բռնըրած է,
ընկել է վանդակի մէջ. Նա զգում է որ սի-

րահարւած է. գիշեր ցերեկ դրա վրայ է մը-
տածում: չարի միջամտութիւնը նրա յանցանքը
թեթեւայնում է հասարակաց կարծիքի ա-
ռաջ, եւ նա թուլանում է, աղատութիւն է
տալիս իր սէրին, եթէ մանաւանդ առաջ էլ
իրանում մի քիչ հակում է եղել: Վարպետ
ջինդարները հեշտութեամբ սիրոյ գիր չեն ա-
նում: Նրանք առաջ իմանում են, թէ ի՞նչ
հանգամանքի մէջ են դրած երկու ապագայ
սիրողները: Նրանք էդ վարպետութիւնը ցոյց
չըտալու համար՝ գտնում են նրանց աստղերը,
որ տեսնեն ինչ յարաբերութեան մէջ են նրանց
աստղերը, իրար կըմօտենան թէ ոչ: Երբ որ
տեսնում են, թէ բանը շատ հեշտ է, միայն
մի քիչ վատահութիւն է պէտք, էդ վստա-
հութիւնն էլ յառաջ է գալիս ջինդարի գրի
ազգեցութեամբ: Իսկ երբ որ տեսնում են, որ
դժւար է կամ անհնարին, ասում են՝ «Ճեր
երկուսի աստղերը իրար չեն մօտենում, չեն
բռնում» . . . Բայց մի հասարակ դէպքը, պա-
տահմունքը հազարաւոր սուտեր է ստեղծել
տալիս, մինը քան զմիւսը հրէշաւոր եւ հաւա-
տացնում ժողովրդին: Օրինակ՝ ասում են՝ ջին-

գարը երես առ երես խօսում է դեւերի հետ։
Եղ իրաւունքը նա ձեռք է բերում չըլա
մտնելոց յետոյ։ Նա փակում է մի առանձին
տեղ, իր չորս կողմով մի խաղ է քաշում գետ-
նի վրայ եւ սկսում կարդալ գրքի ազօթքները,
որ անհասկանալի բառեր են եւ անթիւ դե-
ւերի անուններ։ Դեւերը սարսափում են, որով-
հետեւ պիտի գերի ընկնին էդ մարդու ձեռքը,
որ այնուհետեւ ինչ հրտմայէ՝ կատարեն։ Նը-
րանք ամեն հնար գործ են դնում, որ աղօ-
թող մարդուն վախեցնեն կամ խարեն։ Բարձ-
րացնում են ահագին որոտմունք, կոփու, աղա-
ղակ, քարեր է՝ որ նետում են, կրակ է՝ որ
թափում են, բայց էդ բոլորը միայն թւում
են էդպէս, մարդը ըրպիտի վախենայ. թէ որ
վախեցաւ, նրա բանը պրծած է։ Վերջը մօ-
տենում են, բայց չեն կարողանում խաղից
անց կենալ։ Ուրեմն սատանէքն էլ են վա-
խենում ոչինչ բանից։ Գետնի վրայ փէտով
քաշած հասարակ գիծը մի անպաշարելի բեր-
դի տեղ է բռնում միջի նստած խորամանկ
մարդու համար։ Մօտեցող գեւերը այնքան
դաժան, այնքան զարհուրելի ու սոսկալի դէմ-

քով են երեւում, որ մարդ ինչքան երեւա-
կայէ, նրանից աւելի սարսափելի պատկեր չի
կարող ստեղծել։ Մարդը ըրպիտի վախենայ,
գլուխը ըրպիտի բարձրացնէ, աղօթքի կարդալը
ըրպէտք է դադարեցնէ։ Սոսկալի դեւերը երբ
որ ոչ մի կերպով չեն կարողանում վախեցնել,
փոխում են իրանց դէմքերը եւ հրէշական
կերպարանքները դիմակի պէս մի կողմ է ընկ-
նում եւ տակիցը գուրս գալիս ամենաչքնաղ
աղջկան պատկեր։ Լեզու պէտք է, որ հիմի
նկարագրէ էդ աննման գեղեցկութիւնը։ Գե-
ղեցկուհին շատ գեղեցիկ է, բայց շատ էլ
պարկեշտ չէ։ Նա թոյլ է տալիս իրան ասելու
ամեն խօսք, ի հարկէ հաճոյական, ականջի
դիւրեկան, սիրաշարժ. նա գործ է դնում
անպարկեշտ ձեւեր, բայց երիտասարդ մար-
դուն շատ հաճելի. մէկ խօսքով՝ եթէ հողե-
ղէն մի գեղեցիկ կնիկարմատ կարող է խարել
ումը կամենայ, ինչ կանէ ուրեմն սատանան
ինքը, քանի որ ուրիշներին էլ ինքն է սովորե-
ցնում խարելու կերպը։ Բայց մարդը ըրպէտք
է խարսի . . . Վերջը, երբ որ ամեն հնար գործ
են դնում ու չեն կարողանում մարդուն խա-

բել, իսկ նա իր աղօթքով նրանց տաճում, չարչարում է աւելի քան թէ գժոխի կրակը, այնուհետեւ չոքում են նրա առաջին, աղ ու հաց բերում մէջ տեղ, նրանով երդում, թէ՝ այսուհետեւ մենք քո ծառաներն ենք, երբ որ կանչես, մօտդ պատրաստ ենք, ինչ որ հրամայես, պատրաստ ենք կատարելու։ Մարդը սատանաներից երդմնագիր է առնում եւ արձակում նրանց։

Հիմա գու ինձ ասա, Մանուէլ, մէկ մարդ որ բոլոր դեւերի զօրութիւնը իր կողմը լինի քաշած, էլ ի՞նչ չի կարող անել այնուհետեւ։ Սա է հրաշագործութեան աղբեւրը, հիմքը. քանի որ սրան հաւատում է ժողովուրդը, բոլոր մնացածները չնչին բաներ են։ Սատանան ի՞նչ չի անիլ, — պրծաւ գնաց։

Այնուհետեւ հաւատում են, որ այս ինչ ջինդարը իր երկենացրած եղունգի վրայ մի քանի խաղ է քաշում թէ չէ, ով ինչ արած է լինում, խկոյն ասում է։ Եղունգն էլ մի խորամանկ տնտեսութիւն է հնարագէտ ջինդարի համար, էլ թղթի ծախս չի անիլ։ Նա, ասում են՝ եղունգի վրայ մի քանի խաղ է

քաշում թէ չէ՝ իր ուզած կնիկը փողոցով անց կենալիս բոլոր խալխի միջին տկրորդում է, հէնց իմանում է, թէ ինքն է Եւան դըրախտի մէջ կանգնած։ Նրա աչքին, ասում են, ոչ մի մարդ չի երեւում, ականջը ոչ մի ձայն չի լսում, հէնց իմանում է, թէ դրախտի մարմարէ աւազանների մօտն է կանգնած, մերկանում է, որ լողանայ . . .

Էս դեռ ոչինչ, անշունչ առարկաների վրայ էլ է ներգործում նրաց արած գրի զօրութիւնը։ Ասում են՝ մի ջինդար խալխիայ իր աշակերտի մօրը հաւանել է. աշակերտին սովորեցրել է, թէ՝ «Որ գնաս տուն, մօրը գլխի մազիցը մինը թաքուն պոկիր, բեր»։ Միամիտ աշակերտը որ գնում է տուն, մէրը գլուխը լըւանում է եղել. ձեռքը մեկնում է, մի մազ պոկում։ Խորամանկ մայրը հասկանում է իսկոյն։ իմանում է, որ բանի միջին բան կայ, չի խօսում, բայց երեխի ձեռիցը մազն առնում է, մտնում առւն, մի գոմշի կաշւից մի մազ է պոկում ու տալիս տղին։ Երեխէն մազը տանում է վարժապետին է տալիս, ասում է՝ մօրըս գլխիցն է։ Վարժապետը գործ է դնում

մազը թլամի հետ, մէկ էլ տեսնում են՝ հրէս...
ով հրաշք . . . գոմշի կաշին գեղամիջովը,
թրախկ հա թրախկ, վազում է սիրահարւած
ու գժւած գէպի ջինդար խալիփի տունը. . .

— Ուհ, ինչ ծիծազ կըլինէր, թէ որ
ըլորթ լինէր, ասաց Մանուէլը ծիծաղելով . . .

— Հաբա . . . Էսպէս հազար ու մէկ ա-
ռասապելներով ժողովրդի մէջ բուն է դրել
մնահաւատութիւնը: Բայց դու զարմանում ես,
ասում ես՝ ինչի՞ են հաւատում: Միտրդ չէ,
թէ մենք ինչպէս էինք հաւատում թափի մը-
տիկ տըւող պառավին Նամշովդու քերգումը:

— Ճշմարիտ որ . . . Ասենք մենք երեխայ
էինք, չէինք հասկանում, բայց զարմանալին
էս է, որ պառաւներն աւելի են հաւատում:
Էղպէս բաներով լիքն է մեր գեղերը, էլ ա-
սեղ վէր քցելու տեղ ըսկայ, էնպէս է տա-
րածւած նախապաշարմունքը: Նստում են թէ
վեր կենում, ուստում են թէ հագնում, երազ
են տեսնում թէ մի անսովոր բան, փոշտում
են թէ հազում, աչքն է խաղում թէ գլուխը
ցաւում; բայդուշն է ծրւծրւացնում թէ շուն
օռնում, աղէս է պատահում թէ նապաս-

տակ, մի խօսքով՝ էլ չար աչք ասես, չար հրեշ-
տակ ասես, ամեն բանում, ամեն քայլափո-
խում մի նոր փորձանք են ստեղծում լրանց
համար ու տիսրում, տրտոմում: Խելօք մարդ-
կերանց համար կարելի է դրանք ոչինչ բաներ
են, բայց այդ խելօքները չեն իմանում, որ էդ
ոչինչ բաները մի մի ախտ, մի ցաւ են: Վեր-
ցընենք հէնց խաչի զուլերին, նղաւող հարա-
ներին: Մեզ մի ճոն հարեւան ունինք, խեղճը
քանդակ է իրա կնկայ ձեռիցը՝ շատ էս խաչն
ու էն խաչը տանելով: Ես ինչպէս տեսնում
եմ, էս քաղքցիք աւելի են յիմար քան թէ
մեր գեղցիքը: Արութիւն, դու նղաւող հարս
չես տեսնել: Տեսնես գրանք ճշմարիտ խօսե-
լու ցաւ ունին, թէ ջինդարների պէս դրանք
էլ են խարում:

— Դրանք երեք տեսակ են. իմ տեսած-
ների համար ասում, կարելի է շատ տեսակ-
ներ կան: Մի տեսակը կայ, որ միայն նղաւում
է խսկապէս եւ ոչինչ չի խօսում: Մի տեսակ
էլ կայ, որ, Աստած հեռու տանէ, տեսնելիս
մարդ զարհուրում է: Նրա մարմնի մէջ ընկ-
նում է մի սոսկալի ցնցում, դող. ձեռք ու ոտ-

քը էնպէս են ցնցւում, շարժւում շուտ շուտ,
որ խելքը գլխին մարդը իր կամքով, որքան
կուղի ճարավիկ ու արագաշարժ լինի, չի կա-
րող էդպէս շուտ շուտ շարժել։ Նոր մորթած
համ ինչպէս է թեարյն տալիս, կամ նոր
մորթած ոչխարն ինչպէս է շարժում, գողգո-
զացնում ոտները, — ահա էդպէս շարժում են
նրա բոլոր անդամները։ Բայց շատ չի քաշում,
միայն կէս ժամ, աւելի չէ։ Էդպէմները
առաջ ապշում են, յետոյ սկսում են երգել,
բայց հետզիետէ երգի եղանակը փոխում է,
սկսում են օռնալ, զլլացնել, բլբացնել, յետոյ
սկսում են ձեռք ու ոտքը գետնին զարկել
կամ ձեռներով իրանց կուրծքին խբել։ Դա
շատ քիչ է պատահում, բայց պատահած ժա-
մանակ փորձառու մարդիկը ձեռք չեն տալիս,
չեն բռնում, գիտեն, որ բռնեն աւելի վատ է։
Տանջանկն անցնելուց յետոյ նա խկոյն ուշքի
է գալիս, կարծես խոր քնից կամ մի զար-
հուրելի երազից։ Ուրիշ բան չեն զգում, բայց
յոգնածութիւնից։ Բայց երբորդ տեսակը մի
կատարեալ հարսանիք է, մի ճարավիկութիւն,
խորամանկութիւն է՝ ուրիշ ոչինչ։ Ներկայացրու

քեզ մի տուն։ Նրա մէջ տեղը եօրզան դօշակի
մէջ ձգւել է մի սիրուն, շարմազ, կամ մի
գեղնած սիրթնած բօշի կերպարանքով, մար-
դիյը դժգոհ մի հարսը, կամ տանը մնացած
մի պառաւ աղջիկ։ Թաղի կնանիքը, հարսներն
ու աղջկէրը հաւաքւել են տունը լցւել, որ
կենդանի մեռելի սուզն անեն. Եւ հէնց սգում
էլ են շատերը։ Հարսի մարդը գլխավիրեւը
կանգնել է, ձեռները խաչ արել, վիզը ծռել,
մի խօսքով՝ իր զէմք ու կերպարանքին մի
այսպիսի տեսք է տըւել, որ կամես իր կեանքի
վերջին րոպէն եկել հասել է, հիմի ուր որ է,
պիտի դատավճիռը կարդան երեսին ու տա-
նեն կախ տան, խեղդեն։ Հենց էսպէս էլ պա-
տահում է։ Հարսն սկսում է մի քիչ չարութիւն
անել, իր երեսին սիլլա է տալիս, մազերիցը
քաշում։ Մօտը նստող կնանիքը շուտով ձեռ-
ներիցը բռնում են, նա էլ իբր թէ ակամայ
համդարաւում է։ Ուզարկում են նարեկի,
Աւետարանի ետեւից, որ գլխի տակին
գնեն, ով մի աղօթագիրը ունի, մի Աստ-
ւածաղերա, մի Եփրեմ-Խորի, մի Կիպրիանոս,
կամ մի թլիսիմ, մի բժժանք, բերում են գլխի

տակին դնում: Պատերին մոմեր են վառում
իր հասակի երկայնութիւնով, խոնկ են ծխում,
կասկարանքը ոտնիվեր են դնում; շամփուրը
կամ մի քօռամեխ գետնին ցցում: Հարսը որ
տեսնում է իրան անհոգ չեն թողում; ամեն
բան պատրաստեցին, կատարեցին, բոլոր թա-
մաշաւորները հաւաքւեցան, այնուհետեւ ըս-
կըսում է խօսիլը . . . — Կորէք, կորէք, անհ-
ծածներ, իմ աչքը ձեզ ըստեսնի . . . Ես քու
աչքերը կըհանեմ, անըգգամ, էլ լայեղ չես
անում մօտս գաս հա . . . Զեն թողում հա . . .
Ո՞վ չի թողում. . . մարդը չի թողում, հա . . .
Ես դրան նշանց կըտամ: դրա աչքերը կըհա-
նեմ: չօքէչօք մօտը կըբերեմ: դա շատ է կա-
տաղել. էլ ոչ խաչի է հաւատում, ոչ նրա
զուլին . . . քեզ թակում է հա . . . ես դրան
թակել նշանց կըտամ: Ես դրան էնպէս թա-
կեմ, որ օխտը տարի տեղիցը վեր ըլկենայ . . .
Եհէյ, այ քիթը ծուռ կիկի, ինչի ես խալի
միջին ասել, թէ Ազիզը (հարսի անունն է)
իրանց բաղվանչու հետ շատ է բարեկամացել.
Եկ իմ կշտին չօքէչօք մեղայ ասա, թէ չէ՝ քու
տունն ու տեղը կըհանգնեմ, ծուխդ կըկտեմ . . .

Ախճի, Եղսան, դու ինչի ես Խէջօյի (հար-
սի մարդու անունը) հետ քչիչ . . . հէնց
իմանում ես, ես չեմ տեսնում հա . . .

«Վերջապէս էլ ինչ երկարացնեմ: դու
ինքդ էլ կըլինիս տեսած. գեղ ըլկայ, որ սրան-
ցից մի քանի հատ ըլինին: Էսպէս շարու-
նակում է դարդու հարսը, մէկին սպառնում
է խաչի բերանով, մէկէլի մեղքերը երեսովը
տալիս ամենի մօտ: Չըբերք ու հիւանդու կնա-
նիքն էլ՝ հարսի ոգեւորւած դելը տալիս ժա-
մանակը, կամաց կամաց, երեսներին խաչ հա-
նելով, գնում են կողքումը նստում, մատիցը
բռնում, որ իրանց դարդի, իրանց ցափ հա-
մար էլ խաչը մի բան ասի իր գուշակող հար-
սի բերանովը: Նա էլ որին յոյս է տալիս, որի
վրայ բարկանում է, մինչեւ ամեն խաղ հատ-
նում է, յետոյ թուլանում է, սուտ քունն է
գնում իրան: Հաւաքւածներն սկսում են քաշ-
էկ Աստուծուն փառք տալով, սուրբերին խոնկ
ու մոմ, մատաղ խոստանալով . . . էսպէս
հաբա, Մանուէլ: Ենդուր է ասել խեղճ Աղասին,
թէ «Աստած, քո փառքդ շատ ըլի. էլ մէր
ենք ասում, թէ մարդը քո սուրբ հոգին ունի,

երբ որ նրա միտքը քարից պինդ ա, գլուխը
հաստ»։ Ենքան բաներ եմ տեսել, Մանուէլ,
որ հիմի դժւարս գալիս է թէ հաւատամ,
որ ճշմարիտ տեսած կըլինիմ. ասում եմ, երեւի
լաւ չեմ նկատել. ի՞նչպէս կարելի է, որ բանա-
կան մարդը էսքան անխելք լինի. Ես նղաւող
աղջկերքը էլած սուրբերը քիչ են համարում;
նոր նոր սուրբեր էլ են գտնում։ Մէկ անգամ
էսպէս մի նոր խաչի պատահեցայ ուխտա-
ւորներով լիքը։ — Էստեղ ես, առաջ սուրբ չեմ
տեսել, ասեցի, էս ո՞րտեղից լիս ընկաւ։ Թէ՝
բաս չես ասի՞՝ Առուշանանց Եղսանն է գտել։
Եղսանին ինքս տեսայ, հարցրի, ասում եմ՝
«Գտած խաչիդ անումն ի՞նչ է»։ թէ՝ «Աստ-
ւածածին է»։ «Ինչից գիտես»։ «Երազումն
եմ տեսել»։ «Ի՞նչպէս տեսար»։ «Երկէն սիպ-
տակ մօրուքով մի ծեր մարդ էր»։ «Ախճի,
Աստւածածինը տղամարդ հօ չի», որ մօրուք
ունենայ»։ «Դէ ես ի՞նչ անեմ, ինքն ասեց,
թէ ես Աստւածածինն եմ, էս էլ իմ ծաղկա-
վանքն է, պիտի շինել տաս»։ Նրա ասած
վանքատեղն էլ մի աւերակ թուրքի մատուռ էր։
Հաբա, Մանուէլ, ի զուր չի Աղասին ար-

տասուքն աչքերին ասում. Մարդս որ ծնառում
է, մէկ գունտ մսից աւելի ոչինչ չենք տես-
նում. տարիք են անց կենում, որ քիչ քիչ ոտն
է ըլում, քիչ քիչ լեզու, ուշ ու միտք գալիս...
Բայց վայ էն էրէխին, վայ էն աղդին, որ
աչքը էնպէս գոգում բաց կանի, որ լսի տեղ
խաւար կըտեսնի, աչքը բաց՝ գուգ ճամփէն
կըթողայ, քարէքար կընկնի. վայ էն աղդին,
որ ընական օրէնքը կըթողայ, անբնականին
կըհետեւի, որ էնպէս խրատ տըւող չի ունե-
նալ, որ նրան հոգի տայ, եւ ոչ հոգին էլ
հանի։ Եարաբ որ լաւ կարդացող էր էլել,
էրէխէքանց ջոկ, ժողովրդին ջոկ, գիշեր ցե-
րեկ խրատ էր տուել, կարդացրել, լուսաւորել
էր, հիմիկ մեր աղդը էս հալին կըլինէր, էս
տեղը կընկնէր . . .

— Ի հարկէ էն ժամանակն էլ էսպէս
չէր լինիլ, ասաց Մանուէլը. բայց ուր են մե-
զանում նրա ուզած կարդացնողները. էլած-
ներն էլ աւելի խաւար են տարածում, քան
թէ լոյս. ունքը շտկելու տեղ՝ աչքն էլ են
հանում»։ Գնանք, գնանք, Արութիւն, վեր
կաց գնանք, մութին ընկնում է . . . մենք մեր

գարդը թողած՝ գեղցոց վրայ ենք միտք ա-
նում, նրանց դարդն ենք քաշում . . .

— Մենք ի՞նչ դարդ ունինք, փառք Առ-
տուծոյ, ասաց Արութիւնը եւ սկսեցին քաշ-
վիլ դէպի տուն:

— Ի՞նչպէս թէ ի՞նչ դարդ ունինք: Շո-
րես մաշւել է, գրքի փող քիայ: Ախալէրքս
չեն օգնում, հէրս կենդանի չէ, ուտելիք չեն
ուղարկում, որ գոնէ կերածս աչքներին չե-
րեւայ: Դու հօ լաւ գիտես սրանց բնութիւնը,
մարդի բերնի թիքէք համբողներ են: Խեղճ
քոյրս իր կարավարձը դիփ ինձ վրայ է մըս-
խում, բայց դրանով ի՞նչ պիտի դառնայ: Դու
էլ հօ իմ օրումն ես, էլ ինչո՞ւ ես ասում, թէ
դարդ չունինք: Դէ արի խելք խելքի տանք,
մտածենք, տեսնենք ի՞նչ պիտի լինի մեր ճարը:

— Ես շատ եմ մտածել, Մանուէլ, բայց
ոչինչ հնար չեմ գտել: Էգուց գնանք Օվակիմի
մօտ, նա փորձւած մարդ է, կարելի է մի
ճանապարհ ցոյց կըտայ մեզ:

Ազատ մտածելու առաջին քայլը երկ-
մը տելն է: Մարդ մինչեւ չերկմոի, թէ ու-
ղիղ է արդեօք իր այս կամ այն համոզմունքը,

չի էլ կարող նրա սուտն ու ճշմարիսն իմա-
նալ, եւ ոչ ուրեմն ինքնաճանաշութեան կըգայ:
Բայց երկմոեն այնքան հեշտ բան չէ. դա
հազարից մէկի հետ չի պատահում: Երկմոու-
թիւնը մի տարակութիւն, մի կասկած է
յառաջ բերում, յետոյ դառնում է մի յուղ-
մունք, մի խռովութիւն եւ ի վերջոյ մի պա-
տերազմ, որ անխնայ քարուքանդ է անում դա-
րերով սրբացած մի մոտաւոր ու բարոյական աշ-
խարհի բոլոր խախուտ շէնքերը: Այդ պատե-
րազմն այնքան ահեղ է լինում, որքան պա-
տերազմողը ինքն իրան մինչեւ այն օրը խաբ-
ւած է համարում, որքան նա զգում է, որ
ինքը մի ստրովկ, մի գերի է եղել: Մեր պա-
տանիները գեռ չէին հասել այս աստիճանին,
դեռ նոր էր ծլում մանանխոյ հատը նրանց
մատաղ ուղեղի մէջ, նրանց պահանջը դեռ
շատ փոքր էր: Բայց Արութիւնի մէջ ապագայ
կռւասէր զինւորի նշաններն երեւում էին ար-
դէն: Մի ծայրայեղութիւնից դէպի միւսը թռչե-
լու հակումն ունէր նա: Տեսնենք: Տարաբախ-
տաբար նրանք ապրում էին մի այնպիսի ժա-
մանակ, երբ ուսումնառութիւնը մի անհրաժեշտ

պահանջ չէր. երբ չքաւոր աշակերտներին օգնելու, կարեկցելու սովորութիւն չըկար. երբ չըկար գնահատութիւն շնորհքի, տաղանդի, եւ հանձարի տէր մարդը համարւում էր խելագար, կամ առնուազն՝ հերետիկոս։ Ամեն ոք ինքը պէտք է իր համար ճանապարհ բայց անէր հայկական խոպանացած անդաստանի վրայ, եւ այդ էլ շատ քչերին էր յաջողում. . .



Պ.

Օվ.ԱԿԻՄԻ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ



ուաւոտեան ժամի տասնին՝
Օվակիմը նոր արդէն վեր էր
կացել տեղիցը եւ խալաթը հագին՝ գրասեղանի
մօտ նստած՝ թէյ էր խոնամ. բայց ընկղմած
լինելով մի խոր մտածութեան մէջ, թէյը
նրա աչքին չէր երեւում։

Նախընթաց երեկոյին մինչեւ կէս գիշեր
նա. մի նոր գիրք էր կարդացել եւ նրանում
գտնելով իր խակ մտածմնների հաստատու-
թիւնը՝ սկսել էր աւելի եւս յափշտակվիլ եւ
հիմա էլ գեռ նրա վրայ էր մտածում եւ ինքն
իրան մրմռում, խօսում, ոգեւորւում։ Վեր-
ջապէս երբ նրա խելքն ու միտքը մի ճարտար

Հռետորի գեր սկսեցին կատարել, նա այդ միջոցին տաք թէյի լիքը բաժակը թերատ կարծելով՝ յանկարծ վրայ բերաւ թէ չէ՝ այնպէս վեր թռաւ տեղիցը, ինչպէս տաք ջուր գլխին ածած . . .

—Վայ ես քու չայ մօգոնովին ի՞նչ ասեմ։
—ասաց Օվակիմը բերան մերանը սրբելով, բայց քիարողանալով թոյլ տալ իր մտածութիւնը, որ իրան սաստիկ գրաւել էր, սկսու սենեակէ մէջ անց ու դարձ անել եւ ինքն իրան խօսել։ Յոյց տալու համար, թէ ինչպէս էր Օվակիմը երբեմն ինքնիրան գելը տալիս, մէջ բերենք նրա այժմեան կցկտուր եւ խառնըփնժոր դատողութիւնը։ Սակայն պէտք եմ համարում առաջուց առել, որ Օվակիմը մեծ ուսում չունէր. եւ ո՛վ ունէր այն ժամանակ մեծ ուսում, որ նա ունենար։ Նա իր ժամանակի ընթերցասէր եւ ընթերցասիրութիւն տարածող մարդկանցից մէկն էր։ Օվակիմը եւ ուրիշ մի քանիսը անձամբ կամ գրաւոր յարաբերութիւն ունէին իրանց ժամանակակից ուսումնական եւ բանասէր հայերի հետ, ինչպէս Թաղիազեանցի, Աբովեանցի, Նահնազարեան Կարա-

պետ վարդապետի, որոնք մասամբ նոր ուղղութեան տէր էին եւ այդ ցոյց էին տալիս ոչ այնքան իրանց տպագրութիւններովը, որքան բերանացի խօսելով եւ նամակագրութիւնով։ Օվակիմը Թաղիազեանցի գրաւոր աշխատութիւնների ջերմեռանդ տարածողն էր. նա երբեմն աշակերտակից էր եղել Խ. Աբովեանցին եւ վերջերումը նրա մերձ բարեկամներից եւ համակրողներից մէկն էր։ Այսպէս՝ մեր Օվակիմը մի ուսումնասէր մարդ էր եւ ոչ ուսումնական։ Նա վերացական խնդիրների վրայ մըտածող մարդ չէր, նա գիտնական չէր եւ ոչ բանաստեղծ։ Նրա վիկիսովիայութիւնը վերաբերումէր առօրենյակեանքի երեւոյթներին, բայց նա այդ երեւոյթները շատերի նման մի պատահական բան չէր համարում եւ ոչ մի աներեւոյթ ձեռքում խաղալիկ, այլ նշմարում էր նրանց մէջ մի անխախտ օրէնք, եղած դժբախտութիւնները համարում էր ան չը աժե 2 տչարիքն եր, որովհետեւ դրանք նոյն օրէնքի աղդեցութեամբ էին կատարում ինչպէս եւ բոլոր բարիքները նրանից էին յառաջ գալիս։ «Չըկայ, ասում էր նա, աշխարհիս երեսին ոչ

մեղաւոր եւ ոչ արդար մարդ»։ Ասում էր՝ «մեղաւորը մեղաւոր չէ, որ ինքը մեղաւոր է, եւ ոչ արդարն է արդար, որ ինքն արդար է»։ Ահա այսպիսի մի տարօրինակ ոճ ունէր Օվակիմի փիլիսոփայութիւնը։

...Այս, այս, ովկ կարող է սրա ընդգէմբան ասել. այս անհերքելի ճշմարտութիւն է. այսպէս խօսում էր ինքն իրան Օվակիմը։ Ովկ ինչպէս կայ կայ. նա ուրիշ կերպ լինել կարող չէ. ուրեմն «մեղադրել» եւ «գովել» բայերը պէտք է իմ մոտքի քերականութիւնիցը հեռանան։ Պիտի ասեն՝ «Եթէ մեղադրել կամ գովել կարելի չէ, ել ի՞նչ ասել է ուրեմն դատաստան, դատապարտութիւն, վարձատրութիւն, չար եւ բարի, մոլութիւն եւ արդարութիւն, վերջապէս գժոխք եւ արքայութիւն»... «Եղբայր սիրելի, կասէի ես այդպէս ասողին, դու իմ գլխին նարեկ մի կարդար, ես խենթ չեմ։ դու առաջ լաւ հասկացիք, տես ես ի՞նչ եմ ասում։ Իմ ասելս այն է, որ մարդուս կեանքը մէկ է եւ նրա նպատակը մէկ։ Բայց ի՞նչ է նրա նպատակը։ Չը գիտես։ Շատ լաւ։ Ինչու է ծնւել։ Ելի չըգի-

տես։ Բայց ի՞նչ կայ այստեղ չըգիտենալու։ Չըգիտես նրա համար, որ չես ուզում գիտենալ այն, որ կարող ես գիտենալ, բայց ուզում ես այնպէս բան գիտենալ, որ ոչ ոք չի կարող գիտենալ։ Ծնւել է երեխան. այստեղ հարկաւոր չէ փիլիսոփայութիւն. նա ուտել կուզի, նա ապրել կուզի. նա ծնւել է ապրելու համար։

«Ամենայն կենդանի բնականաբար, աստւածային անխախտ օրէնքով, նրա մի անգամ ընդ միշտ դրած հրամանավ, պէտք է մի գործով զբաղի, մի նպատակի դիմէ, այն է աշխատի ապրել, որովհետեւ նա ստեղծած է ապրելու համար։ Զապրել՝ կընշանակէ ընդդէմ գնալ ստեղծողի կամքին. բայց այդպիսի ընդդիմութիւն չի ցոյց տալ ոչ մի էշ, ոչ մի գաղան, ոչ մի թուզուն, այդ տեսակ յիմարութիւն միայն մարդը կարող է անել, բայց ոչ առողջամիտ մարդը։ Մարդը, բանական կենդանի լինելով՝ առաւել եւս ընդունակ է հեշտութեամբ բարելաւացնելու իր ապրուստի հնարները։ Այս նրա ճակատագիրն է, այս նրա նպատակն է. քաղձածութիւնը մի խթան

Ե, եւ նրան միշտ կստիպէ ուտելու բան ձեռք
բերել ապրելու համար:

«Ամեն ինչ առուտուրի պէս մի բան է:
Ում ինչ պէտք է, էն-կառնէ, ով ինչ ունի՝
էն կըծախէ։ Կըպատահի, որ ոչ առնող լինի,
ոչ ծախող. կըպատահի, որ ծախողի ձեռինը
մի անգին մարդարիտ լինի, բայց ոչովի հա-
մար նա մի բան չաժենայ։ Ով կուզի որ իր
աշքը կոյր լինի. ամեն մարդ էլ իր կարողու-
թեան չափ աշխատում է լաւ ասլրել. մէկն
ուզում է աղա դառնալ, միւսն ուզում է
ստրկութիւնից ազատւել, մէկն ուզում է շատ
փող հաւաքել, միւսն ուզում է լաւ ուսում-
նական դառնալ, մէկն արհեստ է սովորում,
միւսը մշակութիւնով է բաւականանում։ Ամենքը
մի եւ նոյն բանը դառնալ չեն կարող եւ չեն
էլ մտածել այդ մասին։ Կեանքի մէջ ինքն
իրան մի տեսակ հաւասարակութիւն է պահ-
պանում։ Ի՞նչ կըլինէր, եթէ ամենքն էլ փա-
փախ կարող լինէին, կամ ամենքն էլ կօշիկ
կարէին։ Այն կըլինէր, որ փափախ կարելիս
փափախը կ'էժանանար, իսկ միւս կողմից կօ-
շիկը կըթանգանար, այնուհետեւ փափախ կա-

րողների կէսը կօշկակար կըդառնար։ Բայց եւ
այսպէս՝ հետզհետէ բան գիտցող մարդկանց
թիւը այնքան շատանում է, որ մի տեղ մնա-
լով՝ սկսում են իրար հաց կտրել, իրար գուրս
մղել, սփռւել, տարածւել։ Այդ ցրւելովն է,
որ թէ արհեստ է, թէ ուսում է, թէ մի
պտուղ է, թէ մի բոյս է՝ հետզհետէ տա-
րածւում է ամեն տեղ։

«Ճշմարիտ է, մարդուս կեսնքը կախում
աւնի ինչպէս բնական՝ նոյնպէս եւ դրական
օրէնքից։ Եթէ մարդս իր ասլրելու տեղին ջր-
նման մի տեղ, անհնարին է, որ այդ հան-
գամանքը նրա ասլրելու կերպի մէջ մի փո-
փոխութիւն ջրձգէ։ Նմանապէս եթէ նրա
դրական օրէնքները փոխեն, դարձեալ անհնա-
րին է, որ այդ նրա մոտածելու կերպի մէջ
մի փոփոխութիւն ջրձգէ։ Բայց այդ փոփո-
խութիւններ անելը այնպէս հեշտ չէ, որ երբ
կամենաս՝ փոխես։ Կեանքի հանգամանքները
գուռնի ծակեր չեն, որ երբ ուզենաս՝ փշես,
եւ ինչպէս ուզենաս՝ այնպէս ածես։ Բոլոր
փոփոխութիւնները, որ պատահում են մի ժո-

զովրդի մէջ, կախումն ունին ժամանակից, նրա հասունութիւնից, զանազան արտաքին եւ ներքին հանգամանքներից: Եթէ այս բոլորն այսպէս է, ուրեմն մարդո չի կարող ըրլինել այնպէս՝ ինչպէս նա կայ: Հովիւ է արդեօք՝ թէ ճգնաւոր, միշխոնատէր է՝ թէ չքաւոր, գիտնական է՝ թէ տգէտ, դրանք ամենքն էլ մի գին պիտի ունենան իմաստուն գատաւորի առջեւ. դրանց ոչ մէկը գո ական չէ եւ ոչ արհամարհական, մէկը մեղաւաւոր չէ եւ միւսն արդար, որովհետեւ գրանդ ոչ մէկը եւ ոչ միւսը ըրլինել այն՝ ինչ որ են, չէին կարող:— Բայց բարեկրթւած մարդը աւելի առաքինի կրլինի: Ի հարկէ: — Բայց մէկը որ գողութիւն է անում, նրան չըպէտք է պատժել: Նա էլ բարեկրթւած է: — Ո՛չ: — Ուրեմն պէտք է այն մարդին, որ մէկին բարեկրթել է, իսկ միւսին ոչ՝ նրան էլ գողի հետ ի միասին պատժել: Եթե որ գիտէ, թէ բարեկրթ մարդը գողութիւն չի անիլ, ինչո՞ւ ամենին էլ չի բարեկրթել . . .

— Ուրեմն . . .

Սյս միջոցին Օվակիմի դուռը բախեցին դրսից:

— Ներս եկէք, ով էք, ասաց Օվակիմը եւ գրասեղանին մօտենալով՝ մի գիրք վեր առաւ եւ սկսեց շուռ ու մուռ տալ նրա թերթերը:

Դուռը բացւեց եւ ներս մտան Սրութիւնն ու Մանուէլը:

— Բարով, բարով, ասաց Օվակիմը, մի ձեռքով մինի՝ միւսով միւսի ձեռքը սեղմելով եւ ապա հրաւիրեց նստել, եւ մի փիլխոփայական հայեայք տալով իր ճաղատ ճակատով գէմքին՝ սկսաւ հարց ու փորձ անել.

— Ի՞նչպէս էք, ուստոնքներդ ի՞նչպէս է առաջ գնում: Լսեցի, որ ձեր ուսումնարանի մէջ խառնակութիւն է պատահել, աշակերտներից շատերը ցրւել են, կարծեմ դուք էլ չէք ազատ մնայել էդ հալածանքից: Ես ուղեցի էդ մասին մի բան գրել, մի քանիսին մեղադրել, բայց մէկ էլ լրեցի, երբ ինձ ու ինձ միտք արի, տեսայ որ ինչ որ պատահում է, չի կարող ըրպատահել. Եթէ երբեմն էլ պատահմունքի առաջքն առնւում է, այդ եւս չի կարող այլպէս ըրլինել: Բայց եթէ կրքննես գործի բուն եղելովթիւնը իր բոլոր շըջապատաղգեցութիւններովն ու պատճառներովը, բեր-

Նիդ էնավեռ կըխրեն, որ լեզուդ յաւիտեան
կըկտրես: Ուրեմն գեռ ժամանակը չի հասել:
Ասած է՝ «Ժողովուրդը որ հաւաքի, գերան
կըկոտրի», բայց մեր ժողովրդի գլուխը որ
հաստ է, իրան իրաւունքն ու ոլարտականու-
թիւնը չի ճանաչում, իր լաւն ու վատը չի
հասկանում, սուտը ճշմարտի տեղ է լնդու-
նում, ճշմարիտը սուտի տեղ, էլ ինչ ասես, էլ
ում խօսք հասկացնես: Թէկուզ իմաստունին
մի յիմար բան ասած, թէկուզ յիմարին՝ մի
խելօք բան. երկումն էլ մէկ է: Իմաստունը
յիմար բանի վրայ կընիծաղի, յիմարը՝ խելօք
բանի: Հայը օրուջ չի պահիլ, թուրքը՝ մեծ պաս:
Ինչ որ մէկի հաւանար սուրբ է, միւսի համար
պիղծ է: Թուրքն եւս նոյնքան առողջ գա-
տողութիւն ունի, ինչքան եւ հայը: Բայց ոչ
մէկը չի կարող ըրլինել այն, ինչ որ է: Ով ինչ
կարող է լինել, չի կարող ըրլինել. ով ինչ կա-
րող է անել, չի կարող չանել: Ազգասէր մար-
դը չի կարող ազգասէր ըրլինել, ինչպէս որ
բարակացաւ ունեցողը չի կարող չունենալ այդ-
ցաւը: Ոչ ոք թող ըրպարծենայ, թէ ես այս
արի եւ այն չ'արի, որովհետեւ նա չէր կա-

կող չանել, ինչ որ արաւ, եւ անել՝ ինչ որ չա-
րաւ: Սրա պատճառը սկէտք է վինտրել նոյն
մարդի մոգումը, հոգումը, մարմնումը, նրա
շրջապատ դրդող հանգամանկներումը. բայց
այս գեռ բաւական չէ. պէտք է վինտրես նրա
հօր մէջ, մօր մէջ, պապի, ապուպապի, տա-
տի, ատուտատի, եւ այն, մինչեւ կըհասնես
Սդամին ու Եւային, յետոյ էնտեղից յետ կը-
դառնաս նոր մէկանց, ու կամաց կամաց, ուշի
ուշով, մեծ հետաքրքրութիւնով ու նկատո-
ղութիւնով առաջ գալ, քննելով նրանց եկած-
ճանապարհը, որ տեսնես նրա նախնիքների
գլխով ինչեր են անց կացել, որտեղ է նրանց
ոտը փուշ մտել, որտեղ ձեռքը կամ ոտքը
կտրւել, որտեղ ինչ արել, ինչ խօսել, ինչպէս
մտածել, ինչից զրկւել, ինչ աւելացրել եւ այն,
եւ այն: Ինչ եւ իցէ, իմ խօսքը ձեր ուսում-
նարանի վրայ էր, բայց ես հեռու գնացի.
երեւի չէի կարող ըրհեռանալ: Զեր վերատե-
սուչը մի շատ պարկեշտ ու բարոյական մարդ-
է. կարծես հին Յունաստանից եկած մի նոր
Սուլրատ լինի: Խօսք չունիմ, բաւական խոհեմ
ու գիտնական մարդ էլ է, բայց շատ է ինեղճ:

թէպէտ էս էլ պէտք է ասեմ, որ թէկուզ
խեղճ էլ չըլինի, էդ գաղանների մէջ ոչինչ
չի կարող անել: Նատ ափսոսացի, որ հրա-
ժարւել է կամ հրաժարեցրել են: Հապա դուք
ի՞նչ էլիք անում մինչեւ հիմա, կամ ի՞նչ էք
մոտադիր անելու այսուհետեւ:

— Ի՞նչպէս որ դուք խորհուրդ կըտաք,
մենք էլ էնպէս կանենք, ասացին մեր պատա-
նիքը միաբերան, որ մինչեւ այն րոպէն լուռ
ու մունջ եւ ուշի ուշով լսում էին Օվակիմի
խօսքերը եւ տեղաւորում իրանց մտքի մէջ,
որ յետոյ իրանք էլ նոյն խօսքերը ուրիշներին
ասեն եւ լուսաւորեն ժողովրդին . . .

— Ես թէպէտ սիրում եմ զանազան խոր-
հուրդներ տալ մարդկանց, բայց ձեզ պէս ան-
փորձ մարդկանց խորհուրդ տալը երբեմն ա-
նօդուտ է եւ երբեմն վտանգաւոր: Ես երբ
որ ձեր չափ էի, շատ խորհուրդ տրւողներ
ունէի, բայց չէի կարողանում կատարել նրանց
խորհուրդը: Ես շատ լաւ գիտեմ, որ դուք
չէք կարող չըլինել այն, ինչ որ լինելու էք,
բայց թէ ի՞նչ էք լինելու, առաջուց գուշակել
չեմ կարող: Ես չըգիտեմ, որքան է ձեր մէջ

ուսման սէրը, կամ ուրիշ ի՞նչ բանի ձգտում
ու հակումն ունիք: Մեր աշխարհքը խաւար,
կեղտոտ աշխարհք է. դուք դեռ ծանօթ չէք
այդ աշխարհին, եւ չարժէ ծանօթանալ. այդ
դեռ վաղ է ձեզ համար: Ես հիմա մէկ խօսք
կասեմ ձեզ, գնացէք, համողեցէք ձեր ծնող-
ներին, ձեր եղբայրներին, որ ձեզ օգնեն: Ա-
ւարտեցէք ձեր ուսման ընթացքը, հասունա-
ցըրէք ձեր միտքը, այնուհետեւ կարող էք ձեզ
համար ապրելու վիճակ ընտրել: Ի՞նչ պիտի
լինի ձեզ վրայ անելիք ծախսը: Եթէ տարին
մէկ օրավար ցանեն ձեզ համար, նրա ար-
դիւնքով դուք կըհոգաք ձեր բոլոր ծախսերը:
ծշմարիտ է, նրանք կոպիտ մարդիկ են. մէկի
հայրն է ասում, տղէս կըփշանայ, էլ ինձ չի
մտիկ տալ. միւսի եղբայրքն են ասում, թէ
նա իր համար աղա պիտի դառնայ, մենք
էստեղ կօռ ու բէգառ քաշենք, ջանը դուրս
գայ, թող ինքն էլ գայ մեզ հետ աշխատի:
Հին նահապետական նախանձ, կեղտ, ատե-
լութիւն, սէր չըկայ, բան չըկայ . . . Ես ձե-
զանից լաւ եմ ճանաչում ձերոնց. անխելք,
անպէտք մարդիկ են, բանական մարդու վսեմ

զգացմունքներից զուրկ են, մարդակերպ կենդանիներ, գազմններ են . . . բայց ի՞նչ արած. ուրիշ կերպ լինել կարող չեն, հանգամանքները դրանց էդպէս են կազմակերպել: Դրանց պէտք է շողոքորթել, չըպէտք է ծիծաղել նրանց կոպտութեան, կեղտոտութեան, սնահաւատութեան վրայ, գուցէ դրանով շահէք նրանց սիրութ: Առ հասարակ՝ իմացած լինիք, որ քօռին եթէ խուլ ասէք, նա չի նեղանալ, բայց եթէ քօռ ասէք, այդ մի եւ նոյն է թէ դանակով հանէք նրա աչքը: Ցաւագար տեղին չեն գիպչիլ: Էսպէս:

— Ուրեմն ես վաղը կերթամ: Սայլով ուխտ գնացողներ կան դէպի մեր կողմը, նրանց հետ կերթամ, ասաց Արութիւնը:

— Մեր գեղիցն էլ ալիւր ծախողներ են եկել, ես էլ նրանց հետ կերթամ:

— Աստած բարի ճանապարհ տայ, ասաց Օվակիմը եւ ճանապարհ ձգելով պատանի մարդոցը՝ ինքն ընկաւ մի խոր մտածութեան մէջ, եւ յետոյ բացագանչեց.— Մտէք աշխարհ, անմեղ հոգիք, դուք չէք կարող ձեր գլխի անցքերից առնել . . . ուսում էլ առ-

նէք՝ ի՞նչ պիտի դառնաք, աւելի վատ ձեզ համար . . . Աւելի լաւ չէք լինիլ, որ բնաւ ըլնաշակէիք այդ բարոյ եւ չարի գիտութեան ծառի պտղից, որից յետոյ մինչեւ այժմ՝ ձեզ դրախտ երեւցած աշխարհս պիտի դժոկվի կերպարանք ստանայ . . .

— Արութիւն, արի գնանք էսօր մեր տանը մի լաւ քեփ անենք: Մեր տանեցիք բոլորն էլ գնացել են ուխտ, մենակ քուրս է մնացել տանը. Օսանին էլ կըկանչենք մեղ մօտ ու մի լաւ քեփ կանենք: Ո՞վ գիտէ ի՞նչ կանցնի գլխներովս, շուտ կըտեսնենք մէկ մէկու, թէ ուշ, — ասաց Մանուէլը երբ մի քանի քայլ լըռութեամբ հեռացել էին Օվակիմի տանից:

— Երանի՛ քեզ, Մանուէլ, որ գարդ չունիս, քեզին է աչքիդ երեւում . . .

— Տօ ինչի՛ եմ դարդ անում, գիտ հօշեմ: բա ըլսեցի՛ր, որ Օվակիմն առեց. զոռով բան չի լինիլ. ամեն բան իր կարգովն է գընում: թէ որ ուզում ես պատճառն իմանաս, գնա մեր պապ Աղամին հարցրու, որ նրանից մի ուղիղ լուր բերես . . . Ինչ որ դառնալու ենք, չենք կարող ըլդառնալ. ալրծանք գնաց . . .

— Օվակիմի ասածը ճակատագրի պէս մի բան է, ասաց Արութիւնը. մեր պառաւներն էլ են ասում, թէ՝ «ինչ որ ճակատիդ գրւած է, էն պիտի ըլի»։ Ասում էլ են, թէ՝ «լինելու բանի առաջը չի առնելի» . . . կամ թէ՝ «ինչ որ լինելու է, պէտք է լինի, դրան ճար ըլկայ» . . . Բայց կարելի է թէ Օվակիմի ասածը աւելի խոր միտք ունի, որովհետեւ նա ուսումնականի ոճով է խօսում, պատճառներ է վնտրում . . .

— Արութիւն, ինչի՞դ է պէտք, ինչ ու զում են, թող ասեն. մենք էլ որ կըմեծանանք, լաւ ուսում կառնենք, մենք էլ ուրիշ ձեւով կասենք էդ մի եւ նոյն բանը, կամ թէ չէ՝ կըհերքենք բոլորովին. իսկ հիմա, քանի որ գլխներուն դեռ դարտակ տեղ շատ կայ, էսօր գնանք էդ դարտակ տեղը գինով լցնենք, խելքներս զւարթանայ, սրտներս ուրախանայ. աշխարհքիս դարդը հօ մեղ չե՞ն տրւել։ Մի մի դլուս ունինք, ինչպէս լինի, կըսլահենք. նոր չենք հագնիլ, հին կըհագնինք, ով պիտի մեր ձեռքիցը բռնի, մենք չե՞նք մեր գլխի տէրը։ Նրէն ղազախեցի Մարտիրոսը, որ մեր կիսի

չափ բան չի իմանում, վարժատուն է բայց արել, երեխէք է կարդացնում։ Դու չե՞ս տեսել նրա վարժատունը . . .

— Ի՞նչպէս չեմ տեսել։ Անցեալ օրը պատահեցայ, ասում եմ՝ ի՞նչպէս ես, ուսումնարանը. ի՞նչպէս է յառաջ գնում։ թէ՝ «Լաւ, վառք Աստուծոյ, կիսին չեմ արժանի. յիսուն աշակերտ ունիմ։ Աշակերտաներիս հայրերը ամենքն էլ շնորհակալ են։ Մի կիւրակի օր մէկն է հրավիրում, մի տօն օր՝ միւսը. ես էլ սկսում եմ գրաբառ խօսիլ, որքան կարելի է՝ խրթին, որ կարծիք ըբտանեն, թէ ես շատ գիտուն չեմ. բայց հիմի եմ ափսոսում, որ ուսերէն ուսմը շատ եմ բոբիկ. մտիկ եմ տալիս Դրից-փոխովի բառարանումը, որ տեսնեմ ո՛ր տառի վրայ է շեշտ դրած, բայց մինչեւ ամեն մի բառի վրայ մտիկ կանեմ, գլխիս մազը կըսիսկտակի»։ Յետոյ ինձ ինդգրեց, թէ՝ մէկ արի «Դրուգ դէտէյ»իս բառերի վրայ շեշտեր դիր. ես էլ գնացի, մի քանի երեսի վրայ շեշտեր դրի. ասացի. «Դու հայերէն սովորեցրու, ուսերէն երբ լինի՝ կըսովորեն։ Թըլաբանութիւն սովորեցրու, որ հաշիւ անել գիտենան».

թէ՝ «թըւաբանութիւն չեմ գիտում» . . .
— Ի՞նչ թըւաբանութիւն, ի՞նչ բան, ասաց
Մանուէլը, դրանք ոչ մի բան չեն իմանում։
Նրէն տիրացու Սարգիսը, կամարար Մարգարը,
երկնամիրուք տէրտէլը . . . ամենքն էլ վար-
ժատուն ունին, երեխէք են կարդացնում, բայց
ի՞նչ կարդացնել. մէկ օր մեռլի վրայէն, միւս
օր կնունքի, մէկէլ օր մի ուրիշ բանի. էսպէս
քելեխ ուտելով ման են գալիս, երեխէքը տուն
դառած իրար միս են ուտում, իրար շորեր
պատուտում։ Ի՞նչ վարժատուն, խոզատոնը
քեզ օրինակ։ Օրը մէկ ժամ կամ կէս ժամ
նստում են մօտներին, էդ ժամանակն էլ քա-
նոնը ձեռքներն առած՝ դարտակ բղաւում են՝
ս...ու...ս կա...ցէք... Մի քանի ամիս մի այբ-
բեն են սովորեցնում, մի քանի ամիս էլ մի
«անա-բանա», կամ «էն՝ էրթի փուլի, ման՝
օրի բիստի» . . . Ծիծաղ է, ծիծաղ, Արութիւն,
տեսնում ես ինչպէս մարդիկ են ապրում
աշխարհիս վրայ։ Էդպէսները որ հաց են գրտ-
նում ուտում, մեզ ի՞նչ է էլել, փառք Աստու-
ծոյ, որ դրանց կրտանենք ջուրը՝ ծարաւ յետ
բերենք. ի՞նչի՞ ենք դարդ անում. ուրիշ ոչինչ

որ ըլկարողանանք, բա դրանց պէս էլ չենք
կարող մի բան անել . . .

— Ի՞նչ ես ասում, Մանուէլ . . . Մարդ
որ էնպէս վարժապետ ըլլի, որ էս քաղքումը
հատը ըլլինի, էլ ի՞նչ նշանակութիւն ունի։

— Արութիւն, աղւէսը որ աղւէս է, բե-
րանը որ խաղողին չի հասնում, ասում է՝ խակ
է. բայց դու մի աղւէսի չափ էլ յունիս խելք . . .

— Արջն էլ որ արջ է, Մանուէլ, երբ որ
թաթը տանձին չի հասնում, ասում է, «Լաւ,
կենայ իմ հօր խէրին, մի ուրիշը կուտի, իմ
հօրն ողորմի կրտայ» . . . Բայց միթէ մենք
աղւէս ենք, կամ արջ. մենք մարդիկ ենք, բա-
նական մարդիկ. մենք պարտական ենք գնալդէ-
պի յառաջ, յառաջ, օ՛ն անդը յառաջ, մի ձախ,
մի աջ, դէպի կատարեալն եւ դէպի բարին, որ
անհրաժեշտ լցուցանելու պարտք է մարդկային։

— Օ՛ . . . դու ոգեւորեցար էլի «Բամ։
փորուտանն» սկսեցիր . . . Էդպէս կամենք ուրեմն,
առաջ կերթանք, առաջ, էլ աջ ու ձախ չենք
մտիկ տալ, մինչեւ գլխներս մի պատի կը-
դիալցնենք, կամ գլխի վայր կընկնինք մի ան-
յատակ ձորի մէջ . . .

— Հոռոմսիմ ջան, գինի, գինի. Էսօր գինի պիտի խմենք անպատճառ. Սրութիւնին էլ պիտի խմացնեմ . . . Նատ դարդ անող տղայ է, կասենաս բրոր աշխարհքի դարդը նրան ըլին տրւած. Էսօր պիտի ուրախացնեմ; պիտի քեփը բաց անեմ: Դաւիթ մարգարէն ասել է իր Սազմոսումը՝ թէ՝ «Գինի ուրախ առնէ զմարդ, իւղ զուարթ, իսկ հաց հաստատէ զսիրտ մարգոյ»: Նատ ուղիղ է ասել: Գինին էնպէս մի զօրութիւն ունի, որ նրան տեսնողը առանց խմելու էլ ուրախանում է: Էնդուր են ասում, թէ մէկ նմէրէլ մի էծ է տեսել, շատ ուրախացել է ու ծիծաղել. ասել են՝ ինչի՞ ես ծիծաղում, ինչի՞ վրայ ես էտէնց ուրախանում: Ասել է, «Էծ տեսնելիս գինին է միտս գալիս, որովհետեւ գինին դրա տկումն է լինում: (Երգում է)

Սրաքսայ ջրով ցողած,

Հայոց արեւով հասած,

Հայոց աղջիկ է քաղել,

Քնքոյշ ձեռներով քամել . . .

— Հրէն գալիս են . . . շուտ արա, շուտ արա, ես դուրս գնամ, Օսանին առօք փառօք

Պ.

ՍԵՐ, ԳԻՒՆԻ ԵՒ ԵՐԳ



Է շուտ արա, Հոռոմսիմ, ասայ Մանուէլն իր քրոջը,—
շուտ արա, սուփրէն գցիր,
հիմա ուր որ է Սրութիւնն
ու Օսանէն էլ կրգան: Էսօր պիտի մի լաւ
քեփ անենք, խաղ, տաղ, քեօռօղի, մուխամ-
բազ, դիփ պիտի իրար խառնենք: Մեր Սրու-
թիւնը շատ խաղ գիտէ, իրանից էլ շատ ունի
ասած, Էսօր պիտի մի քանիմն ասել տամ. . .
Դէ շուտ արա, շուտ: (Երգում է)

Եղբարք մի շուրջ ժողովւեցէք,

Քաջ Հայոց կերպի կոնծեցէք,

Բաժակները դարդըկեցէք

Մեր Հայ Ազգի կենացը . . .

ներս համեցէք անեմ։ Բարով, բարով, Ովսան-
նա, օրչնեալ, որ գալոցդ ես . . . համեցէք,
համեցէք վերեւ, Էն փափուկ տեղը քեզ հա-
մար ենք պատրաստել . . .

— Ապրիս, ապրիս, Մանուէլ, ասաց Օսա-
նան, Աստւած քեզ միշտ էտէնց ուրախ պա-
հի, մեր Արութիւնն էլ քեզանից մի քիչ ու-
րախանալ սովորի։

— Արութիւնին ինչի՞ ես մեղադրում, ա-
սաց Հոռոմսիմը, դու նրա նման, նա էլ քեզ
նման. կասենաս մի խնձոր ըլիք կէս արած.
երկուտիդ բնութիւնն էլ մէկ է . . .

— Սպասիր, սպասիր, Հոռոմսիմ, խօսքը
կտրեց Մանուէլը. ես քեզ մի նոր բան ասեմ։
Գիտէք ի՞նչ կայ։ Ով ինչպէս կայ, չի կարող
ուրիշ կերպ լինել. թէ որ ուզում էք դրա
պատճառն իմանալ, պիտի երկաթէ տրեխներ
հագնէք, Էն վաղւայ մարդի նման, որ Աս-
տուծու մօտ է գնացել, մի երկաթէ գաւա-
գան էլ ձեռքներիդ բռնէք, գնաք ձեր տատ
եւայի մօտ, նրան կը հարցնէք, նա ձեզ պատ-
ճառը կասի . . . Օվակիմն էսպէս չասեց, Ա-
րութիւն։

Արութիւնը ժպտաց։
— Հոռոմսիմ գինին բեր, գինին . . .
(երգում է)

Այս բերքն է Հայոց երկրին։
Հայաստան տնկած Նոյէն,
Անմահ, երկնային գինին
Նա խմեց, երբ իջաւ սարէն։

— Ի՞նչպէս ես հաւանում, Օսանա, լաւ
եմ երգում թէ չէ . . .

— Լաւ, լաւ, շատ լաւ ես երգում . . .

— Դեռ ապասիր մէկ ամեն բան դարսենք
սուսիրի վրայ, մէկ թաս գինի կոնծեմ, մէկն
էլ Արութիւնին խմացնեմ, որ քեփը բաց ըլի,
ձայն պահի, յետոյ աւելի լաւ երգեր պիտի
երգեմ։ Տօ Արութիւն, ի՞նչ ես ունքերը կի-
տել, ձեր տանը հօ չենք, քեփի արա, վլաւ
էլ ունինք, շատ մի մոտածիր. «Աշխարհքս
հինգ օր է, հինգն էլ սեւ» . . . Պէտք է էդ
սեւ օրերը սպիտակացնել, գիտես ինչով—սիալ-
տակ գինով. որ ուզենաս կարմրացնել, կար-
միր գինով կըներկես. թէ չես հաւատում,
փորձիր. մի բաժակ գինի որ խմես, աշխարհ-

քումն ինչ կայ, ըրկայ, գիտի կըսպիտակի . . .
աբա մէկ էս խիզիլալի համը տե՛ս, էս ձկան
հոտն առ . . . Ո՛չ . . . ո՛չ . . . ո՛չ . . .
Սրութիւն, Սրութիւն, էս խորովածին է՛ . . .
թլթլում է, թլթլում . . . ձեռներդ ուտեմ,
ձեռներդ, Հոռոմնիմ, քուրն էլ ըլի, քեզ նման,
քո Ստեղծողին մեռնեմ . . . մէկ հազար փէ-
շէն տուր . . . Սրութիւն, Ալլահ-վէրդի . . .
— Խմի, վէր գի, պատասխանեց Սրու-
թիւնը ժպտալով:

— Գիտե՞ս ում կենացն եմ խմում, Սրու-
թիւն, որ գիտենաս, կըխմես խալոյն . . .

— Ո՞ւմ կենացն ես խմում, գէ ասա տես-
նենք . . .

— Նրա կենացն եմ խմում, նրա, էն որ
ես ու դու գիտենք . . .

Քոյրերն աչքով են անում միմեանց . . .

— Ոէ որ «Նրա» կենացն ես խմում, մի
լաւ խաղ էլ որ ասես, ես էլ կըխմեմ:

— Քու հոգուն մատաղ, Սրութիւն, ես
քու խաթրը կըկատրեմ: խաղ էլ որ ըզգիտե-
նամ, աշըզ կըդառնամ քեզ համար: Ալանջ
գրէք, ականջ գրէք, Հոռոմնիմ, Օսանա, մի

մուխամբազ պիտի ասեմ, մեր Սրութիւնի նոր
շինած մուխամբազը պիտի ասեմ. . . (Երգումէ)

Բացւել եմ վարդի պէս, բայց չունիմ սոխակ,
Սիրահար խօսնակ.

Նըրա տեղ երգում է մի ուրիշ թռչնակ,
Բուփ եղանակ.

Չեմ տեսնում նըրա մէջ ոչ մի ժամանակ
Սիրոյ նշանակ:

Սիրել մինչեւ ի մահ շատն է խոստանում:
Երդմամբ ուխտ դնում:

Բայց այս ուխտի վրայ շատ օր չի անցնում,
Մէկ էլ ես տեսնում

Պատրաստած քեզ համար սոսկալի վանդակ.
Ո՛չ, թշւառ վիճակ:

Ասում ես. «Այս ինչ է, այս ինչ արեցիր,
Դու ինձ գերեցիր.

Շողոքորթ խօսքերով ինձ գրաւեցիր,
Վերջը խաբեցիր».

Ասում է. «Այսպէս է աշխարհս բռվանդակ,
Դու հօչես մենակ» . . .

Իէ լոիր, հայ աղջիկ, էլ չես գովական
Եւ ոչ աննման.

Պահիր սրտիդ խոցը մինչ օր քո մահւան,
Մտցուր գերեզման.
Զասես ովաստաղանցիդ մի խօսք հակառակ:
Չըդառնաս առակ:

— Ապրիս, ապրիս, Մանուէլ, շատ ապրիս, ասաց Օսանան, սրբելով արտասուրը, որ յառաջ էր եկել երգի ներգործութիւնից:
— Ռոման, Արութիւն, րոման, բզաւեց Մանուէլը: Տեսար՝ իմ երգելն ինչպէս ներգործեց Օսանի վրայ. չէ, ես լաւ աշբող եմ էլել, ով գիտէ, կարելի է ժամանակով, երեւելի բանաստեղծ էլ դառնամ. . . Օսանա ջան, քու կենացը, Աստած սիրտդ ուրախ պահի, Աստած որդիքդ քեզ բաշխի, դիմունանց կանաչկարմիրն էլ կապեռ: Հոռոմնիմ ջան, սաղ ըիս, մարդըդ ապրի, սկեսրիդ հոգին Գաբրիէլ հրեշտակն առնի տանի արքայութեան մէջը գցի. Արութիւն ջան, քեզ ինչ ասեմ, թող որը որ լաւ է, էն անի Աստած. դէ վեր կալ թարդ, Հոռոմնիմ դու էլ, Օսանա, դու էլ վեր կալէք թասերդ. Արութիւն, «Հայոց աղջիկներ», միասին. (երգում են)

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ, Երբ միտո էք գալիս, ասում եմ ես ախ:

— Կեցցեն Հայոց աղջկերքը, բզաւում են մեր պատանիքը միաբերան, երբ վերջացնում են երգը, եւ բաժակները դատարկում:

— Ապրիք, ապրիք, ասում են քոյրերը, սրտանց ուրախանալով, որ այնպէս «ուսումնական» եղբայրներ ունին:

— Արդեօք Հայոց աղջկերանց նման սիրուն, շարմաղ էլ ո՞ր աշխարհքում, ո՞ր աղջում կըլինի, ասաց Մանուէլը: Ուրիշ ազգի աղջկերքը—որը շէկ է լինում, որը դեղնած, որը սեւ, որը քթատ, որի շինքը կարճ, որի ուսերքը հաստ, որի մէջքը թիկունքին հաւաար. մի խօսքով՝ մի սիրուն պատկեր, մի սիրուն կազմածք չես գտնիլ նրանցում: Հայ աղջըկայ վառվուուն աչքերը, կամար ունիքերը, լուլա շինքը, բարակ մէջքը, շահմար ծամերը, նրա նուրբ պուօշները, մարգարտէ ատամները, մոմի պէս մատները, մարմար կուրծքը, շամամ ծծերը, նրա մէկ բոյն ու բուսաթը սաղ աշխարհքի հետ չեմ վոխիլ: Ի զուր հօ չեն

մեր աշըղները ջունուն դառել նրանց սիրովը
վառւել, հէնց գովել են ու գովել, մի գլուխ
գովել: Ի՞նչ անեն խեղճերը. մի բան որ տեղ-
նուտեղը լաւ ըլի, ոտից մինչեւ գլուխ, գլխից
մինչեւ ոտք, պիտի առաջին չոքես, ձեռներդ
սրտիդ գնես, շլինքդ ծռես, աղաճես, պաղա-
տես, գովես, փառաբանես, մինչեւ բերանիդ
ջուրը գնայ, զմայլիս, վերանաս, աչքերըդ
մթնի, ուշաթափւիս, վէր ընկնիս, դելը տաս...
Ա. Հ ինչպէս... (երգում է)

Եազութ եաման ես, լալ մերջան ես,
Շատ աննման ես,
Աննմաթէնէդ, բարկութենէդ
Ինձի զայ չանես.
Ինձ նաշխունեանցիս, սիրովդ էրւածիս
Թաք հետրդ տանես.
Կամ չոքիս ջանիս, հոգիս հանես
Կիսամեռ չանես
Ինչ կուղէ անես, թէկուզ սպանես
Իմ ճարը դուն ես . . .

— Կեցցէ նաշխունեանցը, մեր ազգային
երգիչը, բղաւեցին պատանիքը վերջացնելով

պարոն նաշխունեանցի մուխամբազը եւ կոն-
ծեցին նրա կենացը:

— Մանուէլ, քու կենացը, Մանուէլ, ա-
սաց Օսանան, Աստւած քեզ էդպէս ուրախ
պահի միշտ: Արութիւն ջան, զօրանաս: Զեր
երկուտի կենացը, Աստւած ձեր սէրն անխղելի
ու հաստատ պահէ, թագներիդ արժանի ըլիք,
թշնամու սրտով չըլիք, մուրազներիդ համեք:
Ա'ստւածատուր, Հո՛ռոմնիմ . . .

— Վայելէ, ինձ տուր, պատասխանեց Հո-
ռոմնիմը:

— Ա'ստւածատուր, Ա'ստւածատուր, բզա-
ւեց Մանուէլը: Նաշխունեանցի անունը մոռա-
ցել էի, հիմի Աստւածատուր ասացին, միտս
ընկաւ: Արութիւն, էդ Աստւածատուրի տա-
ղանտն էլ է աստւածատուր, դրա չափ իսա-
զեր՝ ոլ գիտէ՝ ոչ մի աշըղ ասած չըլի . . .

— Ես տեսել եմ դրա խաղերի դաւթար-
ները, դիսի էլ կարդացել եմ: Դա մի զարմա-
նալի մարդ է, ուրիշ աշըղների պէս թուրքե-
րէն չի ասում: դրա բոլոր խաղերը հայերէն են,
բայց ձեւն էլի թուրքերէնի է: Մի եւ նոյն աւալ-
ախլրը, գիւթարփանմազը, դոդաղ-դագմազը:

— Բայց էդ ի՞նչ տեսակ խաղեր են, էդ
որ ասում ես . . . Ի՞նչ ասեցի՞ր . . .

— Աւալ-ախըր:

— Հա, հա, աւալ-ախըր . . . դրանք ի՞նչ
բաներ են, մէկ մեզ հասկացրու: Օսանա, Հո-
ռոռմանիմ, ականջ դրէք, ականջ դրէք, Արու-
թիւնը պիստի մեզ աշըղների ճարտասանու-
թիւնը սովորեցնէ: Դէ մէկ ասա, Արութիւն,
տեսնենք էդ ի՞նչ բաներ են.

— Աւալ-ախըր բառը թուրքերէն է,
կընշանակէ սկզբնավերջ. Էսպէս խաղի քոլոր
տողերի սկզբի ու վերջի տառը մի եւ նոյնը
պէտք է լինի: Օրինակ՝

Զհալ իքեան ջաննաթ թափտըմ ջաննաթ թաջ,
Զան գեալդի օ սահաթտա եասար աջ,
Զովրաթ ոլէդանդըմ, ջանդա չաքտըմ ջան-
նաթ թաջ,

Զըհադ օլդում ջամալինա եաս արաջ:
Զանկմդա վար ջիւքեամ, չոխ վար եանար գիւջ,
Զամ ջափա աթէշտա չոխ վար եանար գիւջ,
Զաննաթ գեալզար Քիւչուկ-Նովա եանար գիւջ,
Զամ էյլադըմ, փէշամ օլդի եա սարաջ:

— Սպասիր, սպասիր, Արութիւն, ես ոչ
մի բան չեմ հասկանում, հէնց բերանս բաց
մտիկ եմ տալիս . . .

— Ո՞վ է հասկանում, որ դու հասկանաս:
Մեր աշըղները իրանց բոլոր խաղերը՝ բացի
խրատականից՝ էնապէս են շինում, որ ոչով չը-
հասկանայ: Հէնց էդ քրհասկանալն է, որ զար-
մացնում է մեր ժողովրդին. Նրանք զմայում
են, հիանում են էդպէս խաղերիցը: Ի՞նչ լաւ
է ասել, ինչ խորն է ասել . . . էսպէս հիաց-
նում են մէկ մէկու: Բայց ինչի՞դ է պէտք.
դու տեսնում ես, որ սա ջիմ աւալ-ախըր է,
այսինքն բոլոր տողերի սկիզբն էլ, վերջն էլ
ջէ տառն է: Ասողն էլ հայ է, արհեստով
սարաջ, թամք կարող, էնդուր է ասում «ջամ»
էյլադըմ, փէշամ օլդի եա սարաջ»: Հիմի
տես նաշխունեանցի ասածը, որ հայերէն է
եւ հասկանալի, բայց էլի ջէ աւալ-ախըր է:

Զաւահիր, նաջիւան նազանի,
սիրով ինձ անիս իլլաջ,
Զիգարս էշխեմէդ վառիկ է
ուահմով ինձ անիս իլլաջ,

ԶՀՈՎԴ ԽՈՄ չիս, այ բէմուրիվաթ,
 ուր թողիր այլոց մոհտած,
 Զազա տալովդ բէզար էկայ,
 վախտովի ինձ անիս իլլաջ:
 Զիւան ջրն իս, աննման իս,
 մանուշակ իս կապած փունջ,
 Զուխտ աչքիրդ է վառ շամքաղ,
 նհախ ուր իս մոնում քունջ,
 Զուռաթ արա մէկ իղրար տուր,
 մի լինիր համէշա մունջ,
 Զունուն իմ սաստիկ ուրիցդ,
 շուտովի ինձ անիս իլլաջ:
 ԶՀԵԼ ժամանակս իմ խնդրում,
 քանի ծառ իմ դալար, գէջ,
 Զահտ արա սիրով հաստատինք,
 շուտ գոյանայ բար ի մէնջ,
 Զանլաթի սլէս դազաբ մի տար,
 ինձ մի կամիր չար, բէվէջ,
 Զսմս խնայիս նաշխունեանցիս,
 քեզմովի ինձ անիս իլլաջ . . .

— Տեսնում էք, Սահնա, Հոռոմնիմ, դիսի
 չէ է, դիսի, սսաց Մանուէլը;
 — Դիսի չէ, Մանուէլ, միայն տողերի մէկ

սկզբի տառը, մէկէլ վերջի: Հիմի ականջ դրէք,
 դիլ թարփանմազն ասեմ: Դիլ թարփանմազ,
 կընշանովկէ «լեզուն չի շարժիլ»: Եսպէս խա-
 ղերը պէտք է էնապէս բառերից լինին շինւած,
 որ ասելիս լեզուն չըշարժի: Օրինակ.

Բափա ումը կայ, ում կամում իմ, մէ վա է:
 Մըգամքի հառում իմ խափով ու գափով.
 Իմ համբաւ է խափը, կամը մէ վա է,
 Կամում իմ քի ուղիղ փափաքով բափով:
 Քի իմ կամում, եկ քու կամով, ով աղա,
 Կամում իմ քու բուգով, բուխախով խաղա,
 Քի իմ կամում եկ հիմա է, կամ վաղ ա,
 Կակուզ խումով պահէ քիմով ու համով . . .

— Սպասիր, սպասիր, Արութիւն, միջա-
 հատեց Մանուէլը եւ սկսեց երգի բառերն ար-
 տասանելով փորձել, որ տեսնէ իրաւ լեզուն
 չի շարժում ասելիս: Բափա . . . բափա . . .
 աղա, վաղ ա, խափով, գափով . . . Ես ինչ
 զարմանալի բան է . . . ճշմարիտ որ լեզուն չի
 շարժում . . . Աբա էն մէկէլը: Ի՞նչ էիր ասում:
 — Դոդաղ-դագմազ: Դա էլ կընշանակէ
 պոռշներն իրար չեն դիպչիլ: Եղպէս խաղերն

ասողը մի ասեղ է դնում բերնումն ուղղահայեց, այսինքն մէկ ծայրը վերի պոռշի տակին, միւս ծայրը՝ ներքեւի, որ աշկարա տեսնըւի, թէ պոռշներն իրար չեն դիպչում, որունք հետեւ եթէ դիպչելու լինին, ասեղը կըծակէ իսկոյն: Տեսէք, աշա երեւելի Քեշիշօղու «ալիփաւալ-ախըր» դոդաղ-դագմաղը:

Ա. դիմի եար, ալ դաստինի, այընա,
Անընդինան սադըր էյլա եար եարա:

Ա. լ ալընի այընա,

Ա. լ դաստինի այընա,

Ա.խլի զայիլ օլանա

Ա.մլան նա դըր, այը նա:

Ա. դէյգինան եարար դադ-դա այընա,

Ա.ջիշարն սադըր էյլա եար եարա:

—Ա.րուժին ջան, հայերէն ասա, հայերէն. էդպէս հայերէն ջրկայ միթէ . . .

—Հայերէն էլ կայ, ինչպէս չէ, բայց մի եւ նոյն է, էլի ոչինչ չի հասկացէի: Ա.հա օրինակ

Ա.հա հղէ, յղի հայող ա, աղ ա,

Ա.յո՛, օղիա է, հոյ աղա հաղ ա:

—Էս խաղը մի երկայն խաղ է, եւ ունի վեց նշանակութիւն: Առաջին՝ որ այբ սկզբնավերջ է, երկրորդ՝ շրթունքն անհպելի (դոդագմագմագ), երրորդ՝ անլեզւաշարժ է (դիլթարփանմագ), չորրորդ՝ շատ խրթին է, հինգերորդ՝ ասածի միտքը ծածկած է համելուկի պէս, եւ վեցերորդ՝ աղ եղ բառը եօթն անգամ կրկնւած է, բայց ամեն մէկն առանձին նշանակութիւն ունի: Օրինակ՝ մէկ աղեղը կանաչ-կարմիրն է, մէկը՝ նետ նետելու աղեղն է, մէկը՝ բուրդ գզելու աղեղն է, մէկը՝ աղ ու եղ է նշանակում, մի քանի բառում՝ զադը լիւնի տեղ է դրաւծ: Ես հիմա սրա մէկ տողը մեկնեմ: Աստւածատուրն ասում է՝ էսպէս խաղերը որ կան, աղաքար են. որ գցես աշըղի փորը, օխտը տարի չի հալիկ: Հիմա լսեցէք —

Ա.հա հղէ, յղի հայող ա, աղ ա:
Կընշանակէ Ա.հա ճանապարհ, երկու-հոգիս
մտիկ տըւող է, աղ է:

Հիմի պէտք է իմանալ, թէ էս ինչ ճանապարհ է, կամ ի՞նչ երկու-հոգիս է մտիկ տըւողը եւ ի՞նչ աղ: Ա.հա ինչ: Նովոի կինը, որ Սոդոմից փախչելիս երկու-հոգիս է եղել

(որից պիտի ծընւի նեռը) յետ է մոխիկ առւել
և իսկոյն աղէ քար է դառել:—Սհա հղէ, յղի
հայող ա, աղ ա . . .

—Ո՛չ, դրա տունը շինւի, բացագանձեց
Մանուէլը. ես էլ եմ ասում՝ ինչի՞ է էղքան
շատ խօսում. . . Արութիւն, էդ աշրդներն
ինչի՞ են էդպէս դժար բաների ետեւից ընկ-
նում . . .

—Ո՞վ գիտէ. ուղիղ ճանապարհը թողած՝
Կովտի ճանապարհն են ինստրում. լոյս, օրը
կէսօրը թողած՝ մթնումն են խարխափում:
Մի բան, ասում են, որ ամեն մարդ էլ հաս-
կանայ, էլ նա ի՞նչ ասելու է: Խաղն ու աղօթքը
մեզանում մի հանգի բաներ են. ինչքան մութն
ըի, էնքան լաւ է համարւում: Ես անցեալ
օրը մեր խաղ ու պարի վրայ մի ոտանաւոր
գրեցի. աբա ասեմ, տեսնեմ կը հաւանեմ:

—Ի՞նչպէս թէ «կը հաւանես». դու էն-
պէս բան կասեմ, որ ես չը հաւանեմ: Ականջ
դրէք, Օսանա, Հոռոմնիմ: Ախճի, արի, դեռ
փլաւի ժամանակը չէ, էստեղ ուրիշ փլաւ է
եփել մեր Արութիւնը, մէկ արի առաջ սրա
համը տեսնենք: Արութիւն ջան, ասա տեսնենք:

Մեր քաղքումը ամեն մի հայ
Պար է գալիս հանգի հանգի,
Նրա ոտներն արագ-արագ
Կոտրտում են լեզգիհանգի.
Աշտարակյին ծանր ու բարակ
Եալլու ծէրը սկսում է,
Քաղցրիկ «լէլէն» բերանն առած,
Ուրախ դէմքով պարտուում է.

Կարաբաղցուն սլէտք է տեսնել
Ամեն տեսակ խաղ անելում,
Զարկի՞ր լախտով որքան կամիս,
Ոտն առջեւից չի վեր կալնում:
Հաբա չասեմ չխլդանէն,
Մի հատ ոտով պատոյտ գալուն,
Կորեկ-կորեկ, ցորեն-ցըրեն,
Հա գեան-գեալա, դուշ գտնելուն.
Թող դէն ձգենք հարամոլան,
Ովովովէն ու միւսները,
Հալի տախ ու կասկարէնքին
Չե՞ն գրաւում մե՞ր ուշքերը:
Առ հասարակ ամեն մի հայ
Գիտէ խաղալ տեսակ տեսակ,

Ամեն դժւար մի ասպարէզ
Դուրս է գալիս նա համարձակ.

Երբ նստում է նժոյգ ձիուն,
Բաց մէջանում նա խաղում է,
Զրիդ առած հաստ մահակը
Ձեռին միջին դողդողում է:

Այս խաղումը նա փոխում է,
Կարմրում է ու սփրթնում,
Իր հրաքուղիս թուխ աչքերը
Չորս կողմն է նա ձբդ-ձբդում:

Համդէպինը թէ՝ պարսիկ է,
Վառած քաջի որսն է այն,
Ո՞վ կարող է սանձել հային,
Թէ նա կամի ցոյց տալ իրան:

Կեցցե՞ն քաջազունք Հայոց, բդաւեց Մա-
նուէլը իր ձայնի բոլոր ուժովը . . .
—Ա՛ տղա Մանուէլ, կամաց բզավի, թէ
չէ՝ հենց կիմանան թէ տունը կրակ է ընկել . . .
—Ի՞նչ էք ասում, պտտասխանեց Մա-
նուէլը. «Ո՞վ կարող է սանձել հային, թէ նա
կամի ցոյց տալ իրան»: Ախր մէկ էղպէս

բարձրացրու, գոլիիր մեր քաջերին, որ հոգիս
փառաւորւի, սիրտս ծարախանայ, ախօրժակս
բաց ըլի, մեր քաջերի կենացը կոնծեմ, ասաց
Մանուէլը եւ մի բաժակ գինի դարտկելով
սկսեց երգել —

Երկինք զուարժ ակնարկեն,
Նահապետն ՚ի սիրտ ցնծայ.
Զանձն Աստուծոյ ի նըւէր,
Յար եւ կենօք ճոխանայ.
Աստուածապաշտն ի յասպարէզ,
Գոռոզն ինքնին կորանայ . . .

— Սպասիր, սպասիր, Մանուէլ, ես դեռ
չեմ վերջացրել, ասաց Արութիւնը եւ շարու-
նակեց իր ոտանաւորը —

Հայի լեզուն շատ ճարտար է,
Նրա երգերն անհամար են,
Բայց իր տաղանտն ու հանճարը
Դժբախտ կեանքին հաւասար են.
Թէ երգում է նա դիւանի,
Աւալ-ախըր, կամ հասարակ,

Պարզ խօսքերով յայտնում է նա
Ամեն մի բան ծանր ու բարակ,
Արաբերէն ու ֆարսերէն
Թէժնիսի մէջ նա խառնում է,
Նատ հանելուկ, շատ խոր մողեր
Նա սըրա մէջ ամիտիում է.
Երթունքի մէջ ասեղ դրած՝
Նա երգում է դոդադ-դագմազ,
Երբ վառում է սէրի էշխով,
Երգում է եւ դիլ-թարփանմազ.
Հետզիետէ կրակւելով
Երգում է նա գիւղալլամա,
Իր ընկերի հետ միասին
Սկսում է կից զօշամա:
Այս խաղերում գանգատում է
Եւ այրում է Քեարամի պէս,
Երբ համում է մուխամբազին,
Իր եարին չի անում անտես.
Նրան գոլում, մեծարում է,
Եկնում է մի աստածուհի,
Աղայում է, աղերսում է,
Որ իր վրայ գժով նայի.

Ուր էր թէ մեր վեհհոգի հայն
Գործով էլ տար այս խեղճ սեռին
Ազատութիւն; որ նա չունի,
Այլ գերի է մարդու ձեռին . . .

—Ազատութիւն կանանց. . . հայեր . . .
բղաւեց Մանուէլը: Յրովթիւն, դու պրծար քո
ոտանաւորը:

—Պրծայ . . . հաւանեցիր . . .

—Հրաշալի՞ է, անհատ, աննման. էդպէս
բան միայն դու կարող ես գրել, էլ ուրիշ ոչ ոք.
բայց ուրիշի մօտ ըրկարդաս, թէ չէ կըծիծա-
ղին. կասեն՝ էս ի՞նչ է. տուտուց տուտուց
դուրս է տըւել գլխիցը. դեռ պահիր, մի ժա-
մանակ պէտք կըգայ. հիմա մենք շատ խելօք
բան էլ որ ասենք, խելօք մարդիկն անգամ չեն
հաւանիլ. կասեն . . . է՛հ ի՞նչի՞դ է պէտք, թող
ի՞նչ ուզում են՝ ասեն, դու քո ձին քշիր, հալ-
բաթ մէկ օր էլ մեր մօրուքը կըբանի, մեր
խօսքն էլ անց կըկենայ . . . Հիմա ականջ դրէք,
ես պիտի սուփրէն օրհնեմ աշրդի օրհնանքով—

Երեք հարկւր տասնութ հայրապետք,
Քսանըզորս մարգարէք,

Տասներկու առաքեալք,
Տասը պատւիրանք,
Խնը դաս հրեշտակք,
Ուժ կանոն Սաղմոսք.
Եօթնանուն Սուրբ Կարապետ
Վեցթեւեան Սերովեէք,
Հինգ նաւակատիք,
Չորս գլուխ Աւետարանը,
Երեք՝ Երրորդութիւնը,
Երկու՝ Երկինք-գետինքը,
Մէկ՝ Ստեղծող Աստւածը,
Չեր տուն ու բնակարանն օրհնի,
Չեր հանդ ու հանդաստանն օրհնի,
Չեր արտ ու այգեստանն օրհնի,
Չեր տաքար ու հնձանն օրհնի,
Չեր կեռ ու գութանն օրհնի,
Չեր լուծ ու լծկանն օրհնի,
Չեր կով ու կթանն օրհնի,
Չեր օջազը շէն պահի. ամմէն:
— Դէ վեր կաց, Հոռոմնիմ, սուփրէն շէն
արա, ասաց Մանուէլը եւ սկսեց երգել —
ինձ համար չէ գարնան գալը,
ինձ համար չէ ծառի ծաղկիլ.

Ուրախութեան սրտի գրգիռը
Ոչ մի. բերկրանք չէ ինձ համար.
Բայց ինձ համար կրգայ ժամը,
Կերթամ թշնամեաց պատերազմը,
Եւ մահառիթ սպանիչ գնտակը
Անդ պատրաստած է ինձ համար . . .



Արութիւնը, որ գեռ եւս խորամանկութեամբ իր կարծիքը ծածկել չըգիտէր, ծիծազում էր նրանց վրայ եւ հերքում նրանց ասածները: Իսկ նրանք էլ, որ Արութիւնի այդ արարմունքը մի անսովոր հերետիկոսութիւն էին համարում եւ մինչեւ անգամ օրբապղծութիւն, որն արհամարհում էր նրա ասածները, ասելով՝ «Դեռ անփորձ է, խաչի թակարդ չի ընկած», որն էլ՝ խղճալով նրան՝ աղաչում էր, որ այդպէս արհամարհանքով չընայէ խաչի հրաշքներին, եթէ ոչ հետեւանքը կարող է շատ վատ լինիլ իր համար: Ամենից շատ վախենում էին կնանիքը եւ ասում էին--

— Հիմա ուր որ է՝ խաչը սրան կունդ ու կծիկ կանի, բերանը կրծոփի, շլինքը կըգցիքամակը, կընզաւացնի, կըգժւացնի . . . բայց ոչ մի այդպէս բան չէր պատահում, այլ՝ ընդհակառակն՝ որքան բարկացնում էին Արութիւնին, այնքան աւելանում էր նրա հերետիկոսութիւնը եւ աւելի ոգեւորւած էր քարոզում նրանց ճշմարիտ աստւածալաշտութիւն:

— Զօրաւոր սուրբեր շատ կան, մեռնիմ նրանց ողորմութենին, բայց Սուրբ Գէորգի

Ե.

ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՄԻ ՓՈՐՁ



աշելուց յետոյ մեր
պատանիները շատ
տիսրութեամբ եւ երկմտութեամբ բաժանւեցին
միմեանցից: Միւս օրը Մանուէլը ճանապարհ
ընկաւ գէպի իրանց գիւղը, իսկ Արութիւնը
գէպի Բօնսու Սուրբ Գէորգը:

Սայլապան վրացի Գիօրգին հարկադրում
էր եզներին, որ շուտաքայլ երթան գէպի իր
անւանակից Ծմինդա Գիօրգին, իսկ սայլի մէջ
նստող ուխտաւորները՝ արք եւ կանայք՝ խօսում
էին զանազան սուրբերից, նրանց արած
հրաշքներից եւ խաչակնքում էին երեսներին
ամեն մի սուրբի անուն տրւած ժամանակ,
մինչ գեռ Աստուծոյ անունը տալիս ոչ մէկ
անգամ չէին խաչակնքում երեսներին:

հատը չի ըլի, իմ երեսը նրա ոտի տակը. առում է մէկը եւ երեսին խաչակնքում: Դա թուղքերին էլ է պատժում: Մի թուրք գնացել է դրա եկեղեցու դուռը հանել, որ տանի իր մարաքի համար դուռ շինի: Դուռը շալակին՝ հասել է իր տան մօտ, ուզեցել է թէ վէր դնի, դուռը կպել է մէջքից, էլ չի գջրւել . . . թուրքը լացով, արտասունքով յետ է տարել, էլ յետ տեղը դրել, խոնկ ու մոմ վառել, մատաղ արել, որ էլ ուրիշ մի վնաս քլինի իրան: Էդ թուրքը մինչեւ հիմի էլ Ա. Գէորգի զուլն է . . .

— Ենդուր են թուրքերը դրան «դալի խաչ» ասում, է. . . ասաց մի ուրիշը:

— Էդ մի եւ նոյն հրաշքը Ղաղախու Կօթի գեղի սուրբ Սարգսի համար էլ են պատմում, էլի ուրիշ շատ սուրբերի համար էլ. սրանից երեսում է, որ դա մի հնարովի բան է. ասաց Արութինը մաղձուած. բայց դու էնպէս ես պատմում, որ լսողը հէնց կիմանայ, թէ դու աչքովդ տեսել ես թուրքին էլ, դուռն էլ: Բաւական չէ, որ սուտ ասւած բաներին հաւատում էք, ինքներդ էլ նոր սուտեր

էք ստեղծում: Ի՞նչ խաչ պիտի լինի, որ ձես սուտերին հաւանի, թէկուզ էդ նուտերը նրա օգտի համար լինին ասւած: Ուղիղն ասեցէք, Սուրբ Գէորգին էք շատ սիրում, թէ Սուրբ եւ Քաջ Վարդանին, որ Հայոց ազգի ու կրօնի համար Աւարայրի դաշտը ողողել է իր արկնով. . .

— Էդ ի՞նչ Վարդան է, մենք դրա անումը չենք էլ լսել: Թէ որ դա էլ Սուրբ Գէորգի նման զօրաւոր սուրբ է, բայնչի՞ն նրա համար էլ չեն մի եկեղեցի շինել . . .

— Տօ, Վարդանս ո՞րն է, ի՞նչ էք ասում, յարձտկւեց միւս կողմից մի աւելի ջերմեռանդ սրբապաշտ . . . Սուրբ Գէորգի հատը ո՞րտեղ կըլինի, մեռնիմ նրա ողորմութենին, իմ երեսս նրա ոտի տակը: Ե՛րեք-հա-րի ւր-երեք-քսան ու ե-րեք մասունք ունի. արարած աշխարհքիս ամեն կողմումը նրա զօրութիւնը, նրա հրաշքը տարածւած է. ո՞ր Վարդանը կամ Կիրակոսը կարող է նրան հաւասարվիլ . . .

Արութինը, որ Վարդանի մոլեռանդ կողմնակիցն էր, սաստիկ բարկացաւ, որ իր պաշտած սուրբին չ'ճանաչելով՝ արհամարհում են: Նա չէր զգում եւ չէր երեւակայում, որ

ինքն եւս նրանց չափ մոլեռանդ է, տարբերութիւնը պաշտելի առարկաների մէջն էր միայն։ Նրա հակառակորդներն եւս համոզած էին, որ ճշմարտութիւնն իրանց կողմն է։ Այդքան հոգեբան չէր Արութիւնը. ուստի աւելի եւս կատաղի կերպով սկսեց բանակուել նրանց հետ՝ ասելով.

—Գիտէք ինչ կայ. համարձակութիւն չըլինի, ուզում եմ ձեր երեսներին մի քանի ցուրտ խօսք կայցնեմ։ Դուք մի Այսմաւուրք էք կարդացել, ես էդ վաղուց եմ անգիր արել. Ենալէս պուճախներ կըդցեմ, որ կըմնաք «եւ եւ» անելիս։ Ասած է, «թէ իսացն իմն է, զօրութիւնը ես եմ գիտում»։ Սուրբ Գէորգին ես լաւ եմ ճանաչում, քան թէ դուք։ Մի մարդի գլուխ ցաւում է, գալիս է ուխտ. թէ որ մի քանի օրից յետոյ դադարում է, ասում են՝ խայը լիրկեց, թէալէտ առանց նրան էլ պիտի դադարէր. բայց եթէ չի դադարում, ասում են՝ որիշ խայից է, Սուրբ Գէորգն ուրիշ խաչերի գործում չի ուզում խառնսիլ։ Յետոյ գնում են մի պառակի գարի գցել տալիս, որ իմանան թէ որ խայից է։ Պառաւը որ նրանց

Հնդստան ուղարկի, նրանք՝ ճարրը կտրած՝ պիտի գնան. բայց նա էլի էնքան խղճմտանք ունի, որ էդպէս հեռու տեղեր չի ուղարկում։ Ձեր քաղքըցիք գալիս են էստեղ ուխտ. պատահում է, որ փուրգունը շուռ է գալիս, բոլոր մէջի ուխտաւորներին ջարդում, կոտրատում, իսկ եթէ ոչ՝ դրանից աւելի վատթար բան է պատահում։ Բորչալլուի դաշաղ աւազակները հարբած ուխտաւորների ճանապարհը կտրում են, թալանում, կողոպտում, կնիկը մարդի ձեռիցը խում, «շհար գեօպալի» ասելով իրանց խաղն սկսում, մարդին թրատում, ջլատում. . . բա ինչի՞ ձեր Սուրբ Գէորգը չի աղատում։

—Ենդուք չի աղատում, որ ինքն է վինում ուղարկած էն գողերին, որ նրանց պատշէ, որովհետեւ նրանք էլ քեզ պէս բարկացրած կըլինին խային, ուղիղ սրտով չեն ըլիլ գնացած նրա տակը, կամ իրանց սուրբ չեն ըլիլ պահած. ինչ եւ իցէ մի յանցանք կըլին գործած, դրա համար էլ խայը նրանց պատժած կըլի, որ միւս անգամ վաստ բան չանեն։ Ուրեմն էն գողերին որ բոնելու շինին,

Ել չեն կարող պատժել. նրանք կարող են ասել՝
մենք մեզաւոր չենք, մեզ Սուրբ Գէորգն էր
հրամայել. բայց դատաւորը ձեզ պէս անխելք
չէ. նա կասի, որ Սուրբ Գէորգն աւազակա-
պետ չէ, նա սուրբ մարդ է, նա աշխարհի
բաների հետ գործ չունի, միայն դուք էք, որ
ոտով գլխով մոլորել էք, կռապաշտացել
Ստեղծող Աստուծուն թողած՝ քարերին ու
ծառերին էք պաշտում։

— Ասում են նոր մարդիկ են լիս լնկել,
Ել ոչ խաչի են հաւատում, ոչ պասի. դու Ել
Են թաւուրներից ըլլինիս . . .

— Ենթաւուրը ո՞րն է. կարելի է թէ ես
Էնթաւուրներիցն էլ բէթար եմ. դուք էդ-
ինչ էք հարցնում։ Խմացէք, տեսէք ի՞նչ եմ
ասում. թէ որ սուտ է ասածս, աչքս հանե-
ցէք. թէ չէ՝ ուր էք լնկել էս չօլերը։ Ցափ
համար՝ բժիշկ կայ. քեփ անել էք ուզում,
ձեր տանը, ձեր բազերումն ամեն օր քեփ էք
անում. բայց եթէ աւելի փող ունիք, չէք իմա-
նում։ թէ ինչ տեղ միսէք, ես տեղը ցոյց կը-
տամ։ Ձեր որդոցը, ձեր աղջկերանցը ուսում
տրւէք, որ իրանց հաւատը, իրանց աղդը ճա-

նաշեն, ձեզ նման չասեն, թէ Վարդանըս որն
է. ուղիղ ճանպէն թողած՝ քարէքար ջընկնին,
լուսը թողած՝ խաւարի մէջը ջըմանդան . . .

Բոլորէքեանք լուցին, կարծելով՝ որ Սուրբ
Գէորգը գժւացրեց Արութիւնին, այլապէս՝
նրանց կարծիքով՝ նա կարող չէր այնպէս բա-
ներ ասել։

Այսպէս շարունակեցին իրանց ճանա-
պարհը։ Ա.ուածին գիշերը մնացին ճանապար-
հին եւ մի ջուխտ եղը գողանալ տըլին։ Միւս
օրը՝ կարծելով՝ որ Արութիւնի հերետիկոսու-
թիւնը եղաւ նոյն ձախորդութեան պատճառը
նրան ջընդունեցին իրանց սայլումը, որ մի
ուրիշ ձախորդութիւն էլ ջըպատահի։

— Ասում են՝ մի թուրք սարի գլխիցը մի
քարէ խաչ է գլորել. խաը գլորւելով կան-
յում է եղել, թէ՝ «Երանի մի հայ պատահէք,
տակովս անէի, մի լաւ ջարդէի»։ Նիմա՝ խա-
ցին ջիգրացնողն Արութիւնն է, գողերը մեր
եղներն են տանում. դեռ ով գիտէ, էլի ինչ
փորձանք է գալու գլխներիս, միայն նրա հա-
մար, որ բարեսրուութիւն արինք, էդ անհա-
ւատին մեզ մօտ նստացրինք։

Այսպէս խօսողի մարգարէութիւնը շուտով կատարւեց։ Մի զառիվայր տեղում ծուլացան թէ իջնեն սայլիցը, եղները չըկարողացան անկատ անհւատոր սայլի գլուխը պահել, իրանք էլ հետը սրբնթաց գլորւելով ընկան մի խոր խանդակի մէջ։ Սայլը շուռ եկաւ եւ որի ոտը կոտրուեց, որի կոտուը, որի գլուխը ճղւեց, որի քիթը ջարդւեց։ Լաւ էր, որ Արութիւնն այդտեղ չէր, եթէ ոչ՝ մի լաւ ծեծ կուտէր . . .

Արութիւնը՝ իր փոքրիկ ծրարը ձեռին՝ ոտով ճանապարհ ընկաւ դէպի Ս. Գէորգ, ուր եւ հասաւ երեկոյին։

Արդէն բոլոր հեռաւոր եւ մօտաւոր ուխտաւորները, հայերը, վրացիքը, յոյները եւ թուրքերը միասին խառնւած կազմել էին մի խուռն բազմութիւն։ Երեւում էին բազմաթիւ վրաններ, փուրգոններ, տարանտասներ, սայլեր, ձիաններ, փալանած եղներ, մատաղ անելու համար հօտերով ոչխարներ, գինով լիքը տակառներ, տկեր, մէջոկներով, ջրւալներով, թաբախներով, կթոցներով մրգեղէններ . . .

Քիչ քիչ մութը վրայ հասաւ, կրակները, խարոյինները վառւեցան բարձր ալիքներով եւ

օդասլաց հրետներն սկսեցին մինըքան զմիւսն աւելի բարձրանալ եւ մթնոլորդը զարդարել նորատեսակ վայր ընկնող աստղերով։ Ֆամկոզը, որ տարին մի անգամ է միայն երեւում այստեղ իր զանդակի հետ միասին, հնցեցնում էր անընդհաա եկեղեցու քաղցրածայն զանդակը, որ մեծ տպաւորութիւն էր գործում ուխտաւորների այն մեծ մասի վրայ, որոնք միշտ անտառներում մեծանալով զանդակի ձայն տարիներով չեն լսում . . .

Միւս օրը՝ շաբաթ առաւօտը՝ որ նոյեմբերի տասն էր լուսանում, ամբողջ բլրակը շաղախւել էր մատաղի արիւնով, էլ ոսք գընելու տեղ չըկար։ Համբուրողները մի օձապըտոյտ կեռումեռ ճանապարհով վերեւ ու ներքեւ էին անում անդադար իրար սեղմելով։ Տէրուէրները չէին կարողանում «Փարատեազգաւ» եւ «Պահպանիցը» հասցնել, մնացել էին քրտնքի մէջ կորած։ Խեղճ կարգաւորները կարծես երեք մանկանց գերերը լինէին կատարում Ս. Գէորգի փոքրիկ մատուռաձեւ շինութեան մէջ, որի ներսի պատերին անհամար մոմեր վառելով վերափոխել էին մի բարձ-

լոնեան հնոցի: Եկեղեցու մէջ սուգ ու շիւան
էին անում ջերմեռանդ ուխտաւորները իրանց
աղերսալի մաղթանքներով, որ բարձրաձայն
խնդրում էին Սուրբ Գէորգից, իսկ դուրսը
մի եւ նոյն ուխտաւորները մեծ ուրախութեան
եւ զըւարձութեան մէջ էին: Խնդում; ծիծաղ,
հրհոց, քրքզոց, գգւանք, պաշպչոց . . . Մէկ
տեղ կպօսմ էին ըմբիշները, միւս տեղ պար
էին գալիս, մի ուրիշ տեղ խաղեր ու օյխներ
սարքում: Մէկ խօսքով՝ զուռնա, դհոլ, դա-
հիրա, նաղարա, սազ, թառ, սանթուր, չօն-
գուր, խաղ, տաղ, պար, իրար հետ խառնւած՝
խրտնեցնում էին գիծ գոմէշներին եւ քու-
ռակներին, որոնք պլրշած դուրս էին ընկ-
նում, տրտինգ տալիս, փախչում, կնիկ, երե-
խայ ոտի տակ գցում, մուրագներին հասցնում:
Արէլն էլ, իր տասը կանգուն երկայնութեամբ
փայտէ ոտներին սպիտակ վարտիկ հագցրած,
խաղում էր նրանց վրայ, խաղինելով մատոնե-
րին հագցրած չըխկըխկան պղնձէ մատոնց-
ները, եւ երբ յոգնում էր, ձեռքն էր առ-
նում իր աշակերտի շլինքը ձգած, կլոր ու մէջ
տեղը ծակ թաղիքը եւ նրան զանազան գրլ-

խարկի ձեւ տալով՝ ցոյց էր տալիս, թէ որ-
տեղ ինչ տեսակ գգակ են ծածկում: Երբ որ
իջնում էր փայտէ ոտներից, գետնի վրայ ցոյց
էր տալիս իր ճարպիկութիւնը մարմնավարժա-
կան խաղերի մէջ, օրինակ՝ ման էր գալիս
գլխիվայր կանգնած ձեռքերով եւ զանազան
ոստիւններ անում յետ ու առաջ գլխիվայր
շրջւելով եւ այլ այս տեսակ ձեւեր, որից յե-
տոյ ձեռնածութիւն էլ էր անում, այսինքն
ֆօկուսներ, որից հասարակ ժողովուրդը շատ
էր զարմանում եւ աչքակապութիւն էր հա-
մարում ու կախարդական զօրութեամբ արած
մի բան: Աւելի զարմանալի էին մի շիրակացի
երիտասարդի կատարած խաղերը: Նա լարա-
խաղաց էր. պարանի վրայ սովորական ճար-
պիկութիւնները կատարելուց յետոյ, գետնի
վրայ ցոյց տըւալ մի աւելի հրաշալի տեսարան:
Նա սկսեց տեղն ու տեղը պտոյտ գալ այնպէս
արագ, ինչպէս մի ճախարակի անիւ, եւ այդ-
պտոյտը տեւեց այնքան ժամանակ, մինչեւ նա
կարձակէր իր երկու հատ օամնացուի զրունի
եւ բաճկոնակի բազմաթիւ կոճակները: Նոյն
պտոյտի ժամանակ, նա երկու սուր դաշոյն-

ներ ձեռքն առած՝ նրանց ծայրերը դնում
էր աչքերի աղբիւրների վրայ, քթումր, ա-
կանջներումը, որից յետոյ կանգնումէր նոյն դա-
շոյնների սուր բերանի վրայ բոկոտն եւ կո-
տըրտելով խաղյնում ձեռները իր պղնձէ մատո-
նոցները չխկչիւկացնելով։ Նա անթիւ թլիսմներ
ունէր կարած իր վրայ, եւ ժողովուրդը նրա
այդ զարմանալի ճարպիկովթիւնը վերագրում
էր թլիսմների զօրովթեանը։

Թիֆլիզի զըւարձասէր երիտասարդներն
էլ, որ յատուկ այդ օրւան համար լաւ ձիա-
ներ են վարձում, նոր շորեր առնում, զուգ-
ւում, զարդարւում՝ արծաթապատ ղէնքերով,
թէեւ չեն իմանում նրանց գործ ածելը, խառ-
նըւել էին ջրիդի հանդէսի մէջ, որ կատար-
ւում էր ուխտատեղի ստորոտում մի ընդար-
ձակ գաշտի վրայ։ Ջրիդ խաղացողները երկու
մասի էին բաժանւած եւ կանգնած դէմ առ-
դէմ։ Մի մասում էին հայերը, մեծ մասամբ
շուլափեցիք եւ խաչէնցիք, իսկ միւս մասումը
Բորչալուի թուրքերը։ Հայերը հետզետէ տա-
քանալով՝ կատաղեցրին թուրքերին եւ խաղը
վերջացրին սովորական դիպւածները կատա-

րելուց յետոյ, այսինքն բանը կուի հասցրին,
շատ գլուխներ պատռեցին, մինչեւ գաւառա-
պետն ու մողրովլ իրանց զաղախներով մէջ լն-
կան եւ մի կերպ խաղաղացրին վիրաւորւած-
ներին, որոնք լռեցին միայն այն յուսով, որ
միւս տարին կառնեն իրանց վրէժը . . .

Այսպէս մի տեղ զանազան խաղեր էին
խաղում, միւս տեղ՝ շատ ժամանակ իրար ըլ-
տեսած ծանօթ, բարեկամներ էին հանդիպում
միմեանց եւ մէկ մէկու հրաւիրում միմեանց
սեղանի վրայ։ Հարս ու աղջիկ գեղեցիկ զար-
դարւած, բոլորեքեանք ուրախ, բոլորեքեանք
զըւարթ։ մի խօսքով՝ ամեն ինչ հրաշալի էր,
միայն Արութիւնն էր տխուր։ Նա կարծես
մոքումը դրել էր, որ այդ հանգիսի լաւ կող-
մերը չընկատէ։ Նա չէր հասկանում, թէ որ-
քան գեղեցիկ մի առիթ է դա, որ տարին
գոնէ մէկ անգամ ամեն կողմից մարդիկ մի
տեղ են հաւաքում, իրար տեսնում, կարօտ-
ներն առնում։ Քաղաք չըտեսածները քաղաքա-
ցոց նիստ ու կացն են տեսնում, քաղաքացիք՝
գիւղացոց, թող այն զըւարձութիւնները, խա-
գիւղացոց, թող այն զըւարձութիւնները, խա-

ոչ վայելւում են: Նա գիտէր, որ այդ ուխտատեղի բոլոր արդիւնքը յատկացրած է ներսիսեամ դպրոցին, բայց որովհետեւ ն. Դպրոցը այդ տեղերից մօտիկ ոչ մի գիւղից մի որդեգիր չէր պահած եւ չէր պահում, դրա վրայ բարկացած՝ ասում էր. «Ժողովուրդի մի աչքը կուրացնում են՝ որ միւսը լուսաւոր պահեն»...

Կէսօրից յետոյ ամեն խաղ պառաւեցաւ,
եւ սայլերն ու փուրգոններն սկսեցին իրար
ետեւից գոգուալ, որից յետոյ բոլոր տեսարանի
վրայ իջաւ մի դատարկ վարագոյր:



Զ.

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԵՐ

ԵՒ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ



ըռթիւնը, որ կորած հորթի պէս արդէն իր մօրը գտել էր խաչի տակին,
նրա հետ նստեց իրանց սայլումը, եւ ճանապարհ ընկան գէպի Խաչէն: Մայրն անդադար համբուրում էր որդուն եւ ամեն անդամ կրկնում:

Ես քը մատաղ ընկմ, ա թիւն ջան . . .
Խակ Արութիւնն ընդդիմանում էր, ասելով
— Դէ լաւ ա, լաւ. խրէգ պաջի. Ես գիւղում ըմ վար տեսու ինձ շատ ըս սիրում:

— Ես քը մատաղ ընիմ, ա Թիւն ջան.
տեռ վար գիտաս հուզ, էլ հու կրգիդա . . .
Ես քու չարը տանէմ, ա Թիւն ջան:

— Դէ լաւ ա, լաւ, բահ . . .

— Ա՛ տղա, քը մատաղ ընիմ, դէ հունց
անէմ, կարում յըմ թա տաղ անէմ . . . Քը
մատաղ ընիմ, ա Թիւնի, Օսանը հունց ա,
խօսէքը լաւ ըն, մէր պառաւ խնամէն ըրխէս
նըհէտ բըրբշմաւ . . .

— Թող կո՞րչի է, մին նըրայ անումը տալ
մի . . . Ես էլ ասէլ պիտիմ թէ՝ հար օնէմ,
մար օնէմ, էլի՞ . . .

— Խէ, քը մատաղ ընիմ, հինչ այ ըլալ.

— Հինչ պիտիյ ընիլ . . . զահլաս տարալ
ըն. ասըմ ըն. «Էս հինչ ա. եկալ ա կլինէրէս
վէր ընկեալ. ըսկի հաց չօնէնք թա մունք օ-
տէնք, մին բօղազ էլ սայ ա տառալ» . . .
Տեռք էլ Ա՛ ստուծ օրհնալ ա՝ վար մէ հէտ մին
ըլալ ալէր ըղարկէք, հինչ կընի. պա ծէր
սրտումը ջրգեար ըրկա . . .

— Քը մատաղ ընիմ, ա Թիւն ջան, իմ
ծէռանը հինչ կա . . . Պա տեռ գիւղում յըս
քօ հօր խըսեաթը . . . Երփալ ըմ, խրալւալ

Ես էտ մարթին ծէռանը . . . շինը մին օղեօղ
եա աշըլ եկած վախտը՝ հուվ վար մին չանաղ
ա տալիս, նա մին յըւալ ա տալիս . . . Ուրը-
քըշէր մարթիքը պիւրում ա տօնը լինում,
ուտըցընում, խըմըցընում, կըրըմնէն տըրտա-
կում . . . Խօնէքս՝ մըսըրնէն պաց, վըննըրնէն
պաց . . . Նահանց հէտէ մին ճօխտ չմօչէ չից
ինք օնում . . . ասում ըմ «Էտ ըրարմունք չի
վար տեռ անըմ ըս», վէտանը տակն ա քցում,
թակում, կուտրատում, թա՝ «լիւզիտ կըտ-
րէ» . . . (արտաստում է):

— Լաւ ա, լաւ ա, լաց մինիլ, ազի ջան . . .
Ես լաւ տղա կըտառնամ, քէզ կըտանեմ քա-
ղաք . . . Ա՛ Ա՛ . . . սրտումն շատ մուրազ կա . . .
Մին քէզ տսնի մէ հէտ դինջ նստած, էն
վախտը վար մոնի, էլ սրտումն դարդ չար
ընիլ . . . Ամմա հունց անէմ մըհէդ, հի՞ւր
ասէմ, թո՞րը կորչիմ . . . (արտաստում է) . . .

— Ես քու ցաւը տանեմ, ա Թիւն ջան.
լաց մինիլ, քը մատաղ ընիմ, լաց մինիլ . . .
Վախէլ մի, քը մատաղ ընիմ, տեռ քու մուրա-
գէն կըհասնէս, հալա ջահիլ ըս . . . Տեռ ինձ
հէտէ դարդ միր անէլ, քը մատաղ . . . Ես

Էս ապրուաւալըմ, էքիւծ ալեօր կըմէռնէմ. . .
Տեռ վար իմ ըրիսին մին հափուռ հող քցիս,
էն ինձ բոլ ա . . . Լաց մինիլ, ցաւըտ տա-
նէմ, լաց մինիլ . . . (տիրում է լուռկթիւն):



۶

ՄԱՐԴԱԳԵԼ

(ՀԻՆԸ ԵՒ ՆԱՐԸ)



այրական սէրը ամեն մի զգացող
մարդի յայտնի է: Սրութիւնը գլուխը
դրաւ իր մօր զոգումն ու լռեց:
Մայրը՝ գթառատութեան արտասուքն աչքե-
րին՝ սկսեց շփել որդու գլուխը, որով մի քաղցր
քուն բերաւ նրա վրայ: Սայն էլ օրօրոցի
պաշտօն էր կատարում երեխայացած Սրու-
թիւնի համար եւ անընդհատ օրօրում էր, մին-
չեւ հասան տուն, որ շատ հեռու չէր:

Արութիւնը վայր իջաւ սայլից, համբուրեց հօր ձեռքը: Հայրը շատ ուժախացաւ. բայց անձեռվ իր ներքին յուզմունքը, «Սատւած

պահէ քեզ, որդի», ասաց նա վարդապետի
ոճով, որովհետեւ համբուրելու սովորութիւն
չունէր. այդ մեղք էր համարում նա:

Արութիւնը մնաց գիւղումը: Երեք օրից
յետոյ նա այլ եւս հիւր չէր: Այն փաղաքշանքը,
որ նա վայելեց իր հօրից, մի բովէական զր-
ւարձութիւն էր, չէր կարող երկար տեւել:
Նրան հարկաւոր էր, ինչպէս տան մէկ ան-
դամի, որ եւ իցէ կերպով օգտակար լինել,
որ իր կերածը կորած ջրհամարւէր: Նրա անե-
մքը շատ ծանր չէրն լինելու. պէտք է գոմը
քերէր, ձին տանէր ջուրը, տաւարին դարման
տար, փայտը կտրտէր: Այս կատարեց նա:
Յետոյ հարկադրւեցաւ գնալ այգին մշակել,
անտառից փայտ բերել, շինութեան համար
գերան, քար, ջուր: Բայց ուր որ գնում էր,
ինչ որ անում էր, առանց մի վնասի չէր վե-
րադառնում: Կամ ձեռքն էր կորած լինում,
կամ ոտքը ցաւցրած, երեսը չանգուած, մի
բան կորցրած, սայլը շուռ բերած կամ կոտ-
րած, եզը կամ գոմէշը փախցրած կամ կոր-
ցրած: Ակզբումը հայրը չէր բարկանում այս
անյաջող հանգամանքների վրայ, ասում էր՝

«Դեռ խամ տչառ է, եզը կըդառնայ». բայց
տեսնելով՝ որ հետզհետէ վնասներ աւելի է
բերում, առածը փոխեց, ասելով՝ «Մինչեւ աչա-
ռը եզ կըդառնայ, տէրը խոզ կըդառնայ»:
Ուստի մոտածեց վերջ դնել այս դժբախտու-
թեանը նոր ի նորոյ խրատելով Արութիւնին
Խիկարի խրատներով, յանդիմանութիւնով, նա-
խատինքով, վերջապէս սուր սուր մասաներով
ու կատակով: Բայց Աւետիքի կրթութեան այս
ձեւը ոչ միայն չուղղեց Արութիւնին, այլ՝ ընդ-
հակառակն՝ աւելի եւս գրգռեց նրա ինքնա-
սիրութիւնը: Նա տեսաւ, որ ոչ իրան խե-
լօք չի համարում, ինքնապաշտամութեան դիրք
բռնեց, սկսեց ինքն իրան գովել, իրան խելօք
համարել, իսկ բոլոր մնացածներին՝ մանաւանդ-
իր հօրը՝ անխելք եւ յիմար: Այս մի անակնկալ
հարւած էր, մի սաստիկ զարկ, որ չէր կարող
տանել ոչ մի հայր, ուր մնաց թէ Աւետիքը:

— Սա իմ տղան չէ, ասաց Աւետիքն
իր կնոջը:

— Թէ որ քո տղան չէ, ասաց կինը
այնպիսի մի ձայնով, որ աղատ չէր երկիւզին
աղդեցութիւնից, — թէ որ քո տղան չէ, հաբա

ինչու է քեզ նման անկոտրում, քեզ նման
իր ասածի . . .

— Դրա մեղաւորը դու ես. դու գովում
ես իրան, նա էլ երես է առնում, էլ հետը
խօսել չի լինում:

— Ինչու չեմ գովիլ. աչքում մազ է բսել,
մինչեւ նա մէկ սեւ ու սիպտակ է սովորել.
ով է նրանից ուսումով, նրանից շնորհքով:

— Մէկ դու ես շնորհքով, մէկ էլ նա:
Սի երկու տաւար է տանում հանդ, կէսն է
յետ բերում. էդ չէ դրա շնորհքը . . .

— Թէ որ ուզում էիր տաւարած շինես,
էլ ուր էիր կարդացնել տալիս. ով է անում
իր ջըսիրած բանը, որ նա անի. նրա ուշըն
ու միտքը իր գրի, իր ուսումի վրայ է.
ուրիշ ոչ մի բան նրա աչքին չի երեւում. շա-
տերն են ուզում, որ նրա պէս որդի ունե-
նան, բայց Աստւած նրանց թողած՝ քեզ է
տըւել . . .

— Ինչի՞ ես ինչ եմ արել նրան. աչքը
չո չեմ հանել. ինչքան կարողացել եմ, ուսում
եմ տըւել. էլ ինչ է ուզում ինձանից:

— Են է ուզում, որ ասում է, ես իմ

կարդալս, իմ ուսումն դեռ չեմ վերջացրել.
ինչ օգնեցէք, ասում է, մինչեւ ես իմ ու-
սումն աւարտեմ . . .

— Ա' կնիկ, քո խելքն էլ էնքան է կըտ-
րում, ինչքան նրանը: Ուսումի՛ կաւարաւի՛,
ինչ ես խօսում: Ուսումը որ կայ, մի ծով է,
ոչով չի կարող նրան հատացնի. ամեն մարդ
ինչ աման որ ունի, էնքան կըհանի նրանից:
Նիմա դրա ամանը որ լցւել է, ես ինչ մեղաւոր
եմ: թող մեծ աման էր ունեցել, մեծ ուսում
էլ կ'ստանար: Վերջապէս ես աղա չեմ, փողա-
տէր չեմ; ինչքան իմ կարողութիւնս ինձ թոյլ
է տըւել, ես էլ իմ որդուն էնքան եմ ուսում
տըւել. աւելի կարողութիւն չունիմ: Սեր գե-
զումը որ հայր է ինձ չափ չասեմ՝ իմ կիսի
չափ ուսում տըւել իր որդուն . . .

— Դու որ ուզենաս, դեռ էլի կարող ես
օգնել. նրա մի տարւայ հացն ու շորն ինչ է,
որ ջրտաս: Նա ասում է՝ «Իմ ընկերները ժա-
մանակով մարդիկ կըդառնան, բայց ես որ ձեզ
մօտ մնամ, ինչ պիտի դառնամ: Եշն, ասում
է, որ իշի կշտին կապես . . .

— Ի՞նչ, ի՞նչ . . .

— Ի՞նչ պիտի ըլի . . . գու էնքան ասել
ես, որ նա էլ սովորել է . . .

— Ես ի՞նչ եմ սովորեցրել . . .

— Քո մասաները . . .

— Ես ցոյց կրտամ դրան իմ մասաների
զօրութիւնը . . .

— Աստածդ կրսիրես, այ մարդ, երե-
խիս ըրգեւացնես. նա առանց էդ էլ գեւած
է. էլ ոչ մեծ է հարցնում, ոչ պստիկ, ամեն-
քին էլ անպատիւ է անում . . .

Արութիւնը՝ տեսնելով որ իր հօրից օգ-
նութիւն չի ստանալու՝ ուզեց իր տրտմութեանը
մասնակից անել Մանուէլին. Մինչ դեռ այր
ու կին վիճում էին նրա մասին, նա քաշւել
էր հիւրասենեալը եւ գրում էր Մանուէլին
հետեւեալ նամակը —

ՄԱՆՈՒԷԼ

Հոգեկիցդ իմ,

Զըգիտեմ գու հիմա ի՞նչ տեղ ես արգեօք
եւ ի՞նչ վիճակի մէջ, բայց ես այս նամակին ու-
ղարկում եմ ձեր գիւղը, որ ուր էլ որ լինիս,
քեզ հասցնեն:

Աչքդ լոյս, Մանուէլ, ես հիմա գիւժ եմ:
Այսպէս են համարում ինձ այժմ ամենքը: Եթէ
մի քանիսն էլ, եւ այն երբեմն, իմ ասածի
մէջ խելք են նշմարում, ասում են՝ «Դժից
ուղիղ համբաւ»: Ասենք սա մի անպատռու-
թիւն չէ, այլ՝ ընդհակառակն՝ այնքան մեծ է
այս պատիւը, որին ես դեռ չեմ արժանացել:
Բայց այսու ամենայնիւ իմ մանկութեան օրօ-
րոցը, իմ փայփայած ու գգւած ծննդարանը
այժմ ինձ թւում է մի դժոխք, ուր՝ ինչպէս
ասած է Աւետարանի մէջ՝ աղւէսների հա-
մար որը կայ, թուշոնների համար բոյն, բայց
մարդու որդու համար գլուխ դնելու տեղ ըրկայ:
Յիմարութիւն, կոպտութիւն, ծովութիւն, ըն-
չաքաղցութիւն եւ, որ մայրն է ամենայն չա-
րեաց, կեզտոտութիւն եւ, էլի կասեմ, կեզտո-
տութիւն, անտանելի, անմերձենալի կեզտո-
տութիւն, անմաքրութիւն, կեզտոտութիւն . . .

Իրանց գոմերի աւոցեւ հազար տարւան
թրիք կայ կոյտած, չեն տանում իրանց այ-
գիքն ու արտաստեղերն ածում, որով թէ իրանց
հողերը կըքարւոքեն եւ թէ իրանց տները կա-
զատեն ժահահոտութիւնից, որ իրանց այնքան

զգալի չէ, սովոր լինելով այդ հոտին։ Ոչ մի տղամարդ կամ կնիկարմատ չըկայ, որ երկու շապիկ ունենայ, շապկաընկեր հօ—շատերը մէկն էլ չեն ունենում։ Նատ անդամ տեսնում ես սրա կամ նրա կուրծքը աղլուխով ծածկած։ այդ նշան է, որ ժրաջան տանտիկինը իր կամ մարդու շապիկը նոյն օրը բարեհաճել է լը-ւանալ։ Այդ էլ ի հարկէ զատկից զաաիկ կը լինի կամ շատ շատ՝ հինգ նաւակատիքներին. . . Բայց թափ են տալիս թանդրումը ամիսը մէկ կամ երկու անդամ. . . Ո՛չ, որ միտս եմ բերում, գլխիս ցաւը բռնում է . . . Ահա այս մաքրասէր իմաստուններն են, որ ինձ գիտ են համարում, որովհետեւ համարձակում եմ ասել, որ ոջին Աստւած չի ստեղծել, այլ դուք էք ստեղծում ձեր անմաքրութիւնով . . .

Դու լաւ գիտես, որ մեզանում փոքրերն իրաւունք չունին մեծերին ընդդիմախօսելու. . . Մեզանում չըկայ «ներեցէք», որովհետեւ դա մարդավարութեան կըվերաբերի, որի անունը դեռ լսած չեն մերոնք։ Անէծք, հայհոյանք. . . անլուր հայհոյանքների մէջ մտնում է եւ Արարողը եւ նրա ամենայն արարածը։ Կռիւը

կատարւում է դտգանակով, սրով եւ հրացանով։ Զարակամութիւնը սահման չունի, ոխակալութիւնը ժառանգական է, պիտի շարունակի որդոց որդի։ Սէր կայ՝ անասնական, բարեկամութիւն՝ խաբեփայական, խոդակցութիւն՝ բոպէական, գթութիւն՝ բռնակալական, եղբայրութիւն՝ կայենական, հայրութիւն՝ գաղանական. . . Ո՛չ, ես այստեղ չեմ կարող մնալ . . .

Մի հատիկ հոգի, որ այստեղ ինձ միխթարում է այդ իմ մայրս է։ Մայրս Ոեբեկայի վիճակումն է։ Ինչպէս Ոեբեկան իր որդի Յակոբին միշտ պաշտպանում էր հօր ատելութիւնից, այսպէս էլ իմ մայրս պատրաստ է իր կեանքը զոհել ինձ համար։ Նրա սէրը գէպի ինձ այնքան մեծ է, որ՝ ջնայած իր կանխակալ կարծիքներին՝ հաւատում է իմ բոլոր ասածներին եւ հոգւով չափ փառաւորում, որ ինձ նման իմաստուն որդի ունի։ «Մի վախենար, սիրո է տալիս ինձ մայրս, Աստւած քեզ հիտ կըկինի միշտ, նա քեզ չի կորցնիլ, եթէ գու նրա վէշիցը պինդ բռնես։ Միտդ բեր Յակոբին, Յովսէփին, Մովսէսին։

դու հօ գիտես՝ Աստւած նրանց ինչպէս առաջ-
նորդեց» . . . Յետոյ ես ասում եմ, ճշմարիտ
է, Աստւած նրանց հետ էր, բայց նրանք հայ
չեին. Աստւած մեր պապերի հետ էլ է եղել» . . .
Եւ պատմում եմ Հայկի, Արամի, Տիգրանի
քաջագործութիւնները: Մայրս շատ ոգեւոր-
ւում է, մանաւանդ երբ որ պատմում եմ Ե-
ղիշէից հինգերորդ դարում մեր փափկասուն
տիկնանց կրած նեղութիւնները իրանց հայրե-
նիքի պաշտպանութեան համար: Մէկ օր այն-
պէս յուզւեցաւ մայրս, որ լաց եղաւ. տեսնելով
մօրս արտասունքը, ես ինքս էլ արտասեցայ:
Արդեօք մօր նման քաղցր էլ ուրիշ ինչ կայ
աշխարհքումն: Ինչքան բախտաւոր կըլինէին
զաւակները, եթէ հայրերն եւս մայրերի քնիքոյշ
զգացմունքն ունենային: Ընդհանրապէս կոսիտ
են հայրերը եւ կոպտաբար են վարւում իրանց
որդոց հետ: Նրանք իրեւ տան բոնակալ՝ ահ
ու սարսափն են ամենքի: Նրա անունով մա-
նուկներին սպառնում, վախացնում են: Այդ
երկիւղի տպաւորութիւնն այնքան մեծ է եղել
ինձ վրայ, որ այս բոլիս էլ վախենում եմ
իմ հօրից, թէեւ ինքս ինձ սիրտ եմ տալիս,

որ մաքառեմ նրա բոնակալութեան դէմ: Հայրս
մի զարհուրելի մարդ է նաեւ իր հսկայական
հասակով, իր բարկացոտ եւ կնճռոտ դէմքով,
իր ծանրաբարոյութեամբ եւ մանաւանդ՝ իր
կամակորութեամբ եւ այն մեծ համարմունքով,
որ վաստակել է իր մասին: Այս ահռելին ինձ
չի օգնում, ոչ թէ նրա համար, որ ժլատ է,
ոչ. Հայրս ոչ միայն ժլատ չէ, այլ ընդհակա-
ռակն չափազանց առատաձեռն է, միայն ոչ
իր համար, իր տան համար, իր զաւակների
համար, այլ . . . օտարների: Չափազանց հիւ-
րասէր է, եւ հիւրերի համար յատկապէս
օդ ա ունի շինած գոմի մի ծայրումը: Առանց
հիւրի հայ ուտելու սովորութիւն չտնի. եթէ
յրկայ մի օտար հիւր, նա պատահած շինա-
կանին կըլանչէ, որ նրա հետ ախորժակով
հաց ուտի, գինի խմի: Նատ անգամ երեխէքը
անբաժին են մնում, բոլորը հիւրերն են ու-
տում: շատ անգամ՝ իմանալով՝ որ տանը
կերակուր լրկայ պատրաստած՝ նա էլի բերում
է հիւրերին, առելով՝ «ոոխ ու հաց, սիրալ
բաց», բայց այդպիսի դէպքերում մօրս հետ
կռւում է: Ահա այս մարդը, որ ինչքան լաւ

մարդ է իբրեւ հասարակութեան անդամ, նոյնքան վատ է՝ իբրեւ գերդաստանի հայր։ Ես, ի հարկէ, ընդդէմ չեմ նրա հիւրասիրութեանը, այլ ընդդէմ եմ, որ մէկը զոհում է միւսին։ Եւ ես սրանում մի առաքինութիւն չեմ գտնում, այլ միայն մի մոլորութիւն եւ սնափառութիւն։ Ինձ չի տալիս այն, ինչ որ կրկնապատիկ տալիս է օտարին։ Ա.Հ.ա այսպէս է կազմակերպել սրա բնաւորութիւնը։

Մի բան, որ ինձ զարմացնում է, այն է, որ հայրս ոչ միայն չի ուզում օգնել ինձ, որ ես ուսումն շարունակեմ, այլ իր մօտն էլ չի ուզում պահել . . . ահա ցանք ինչ տեղ է։ Ի՞նչ արած, ես էլ մոքումն դրել եմ գնալ դէպի մի կողմ, ուր որ Ա.ստած կառաջնորդէ։ Եթէ ողջ կը մնամ, էլի կը տեսնենք միմեանց, իսկ եթէ ոչ՝ միւս կեանքումը կսպասեմ քո տեսութեանը։ Իմ վերջին կտակը, որ ուզում եմ քեզ յայտնել՝ այս է։ — Եթէ Ա.ստած տայլաւ ուսումն ստանաս, գեղացոյ համար մի ամսաթերթ հրատարակիր հտականալի լեզուով ու մաքով։ Տապած խօսքը՝ ինչքան էլ յիմար լինի՝ աւելի անց կը կենայ, քան թէ ինձպէս-

ների երես առ երես խօսիլը։ Ի՞նչ պտուղ կարող ես սպասել մի խոպանացած անդաստանից, որ միայն փուշ եւ տատասկ կարող է բացնել։ Պէտք է մշակել այդ վայրենացած անդաստանը, բարի սերմեր ցանել. եթէ մենք չենք տեսնիլ, գոնէ մեր յետնորդները կը տեսնեն եւ կը վայելեն նրա պտուղները եւ ինձ նման անմուրազ չեն մնալ։ Ողջ լեր։ Քոյլ Ա.րաքիւն

— Հաբա քո ասելու ի՞նչ է, ա կնիկ, ի՞նչ պէս պէտք է անենք, որ՝ ինչպէս կասեն՝ «ոչ շամիուրն էրսի, ոչ խորովածը»։

— Ա.հա գալիս է ինքը . . . թէ Ա.ստածը կը սիրես, այ մարդ, ըրխօսացնես . . .

Ա.րութիւնը ներս մոտ եւ նատեց իր հօրից հեռու, տախտի ծայրին։ Աւետիքն աչքի տակով մտիկ տըւաւ եւ ինչ որ վնթվնթաց ինքն իրան, բայց այս արգելք չեղաւ, որ Ա.րութիւնը վճռաբար ասէր նրան, թէ ինչու իրան չի ուզում օգնել։

— Ինչ որ կարդացել ես, կէսն էլ աւել է, պատասխանեց Ա.ստիքը։ Ա.ուանց էն էլ տեսնում եմ, որ գու շատ ես հպարտացել,

Էլ ոչովի չես հաւանում: Ծառը որ ծառ է,
ինչքան որ շատ է պառող բռնում, էնքան
ճղները կռացնում, խոնարհեցնում է, բայց
դու մի ծառի չափ էլ չըկաս: Ոչ ծերի պա-
տիւ ես պահում, ոչ մեծի խօսք լսում: ով որ
մի բան է ասում, դու իմացած, չիմացած,
քրքզում, ծիծաղում ես . . .

— Սուտ բանը որ ուզենան ճշմարտի տեղ
հաւատացնել, ում ծիծաղը չի գալ, ասաց
Արութիւնը վատահաբար, օգուտ քաղելով հօր
հանդարս խօսելուցը:

— Սուտ բանը ո՞րն է.

— Ես ո՞ր մէկն ասեմ . . . Հէնց ինչ որ
ասում են, բոլորն էլ սուտ է լինում, ոչ մի
ճշմարիտ բան չեմ լսում: Բօրջալուեցի թուրք
Ալին տասներկու տարի գէլութիւն է արել,
ասում են: Սրանից էլ անհամ սուտ:

— Յետո՞յ, էդ սուտ է. ես ինքս եմ՝ աչ-
քովս տեսել էն մարդին, ինչի՞ սուտ. ու-
րեմն մենք ամենքս էլ սուտ ենք խօսում:

— Դուքո աչքովդ մարդին ես տեսել, մար-
դի ասածին ես հաւատացել, դու հօ չես տե-
սել նրան գէլ դառած, դու հօ չես տեսել

էդ գելին նորմէկանց մարդ դառնալիս: Եթէ
տեսել ես, գէ ինձ հատկացրու, տեսնեմ էդ
ինչպէս է եղել, որ ես էլ հաւատամ. . .

— Ի՞նչպէս պէտք է լինի, պատամխանեց
հայրն ակամայ, ուղենալով որդուն հաւատի
բերել եւ ցոյց տալ նրան, որ ինքն աւելի բան
գիտէ, քան թէ նա, յըկասկածելով, որ իր
բոլոր գիտութիւնը Արութիւնի համար քպի-
տութիւն է: — Ի՞նչպէս պէտք է լինի: Մէկ օր
չարերը հարսնիք անելիս են եղել զուռնա զա-
ւալով. մարդը չի իմացել, որ էդ հարսնիքը
չարերն են անում: միամտութիւնով զնում է
ընկնում նրանց մէջը: Զարերը պար են ածում
նրան, ծափ տալիս, ծիծաղում, յետոյ մի գէ-
լի մորթի են գցում շլինքը, մարդն
իսկոյն գէլ է գառնում, գնում ընկնում գէ-
լերի մէջը:

— Յետոյ, հաքա ինչպէս է ասլել գէլե-
րի հետ:

— Ի՞նչպէս պիտի ապրէր, ի հարկէ գէլի
պէս: Քանի անգամ իսեղճը պատմել է ինձ:
Ասում է՝ տամնով, քսանով ման էինք գալիս
չոլէջոլ, որ տաւար կամ ոչխար որ մեր գը ս-

մաթն էր լինում, միայն նա էր երեւում մեր աչքին, մենք էլ գնում էինք նրան ուսում: Երբ որ Աստւած դսմաթ չէր տալիս, բոլորս մէկ տեղ էինք հաւաքւում ու սկսում էինք օռնալ. յետոյ մի բան էր երեւում աչք ներիս, գնում էինք ուսում: Մէկ անգամ էլ, ասում է, մի լրար ձի երեւաց աչքներիս. գընացինք վէր գցեցինք, մեր մէջ փայ արինք, մէջքի սեռն ընկաւ ինձ. դարտակ ոսկոր էր, էնքան կրծեցի, ասում է, որ ատամիս մէկը վէր ընկաւ» . . . Եւ ճշմարիտ որ առաջի ատամներից մէկը վէր ընկած էր . . .

—Ի հարկէ՝ սուտ ինչպէս կասէր. բայց յետոյ, ինչպէս է նորմէկանց մարդ դառել . . .

—Ի՞նչպէս պէտք է լինի . . . Հերթով գնում են եղել փարախից ոչխար փախցնում: Մէկ անգամ էլ հերթն իրան է ընկաւմ, գնում է մտնում ոչխարի աղալը. շները փրայ են թափում, չօբանները հաւաքւում են. ուզում է, որ թոշի չափարովը դուրս ընկնի, գէլի մորթին ըցեցին թոնիրը, որ քիչ էր մնացել, թէ ինքն էլ հետն ընկնի կրակը. բղաւում է եղել, «վայ, էրւեցի, էրւեցի» . . . գէլի մորթին որ էրւում է, նա հէնց իմանում է, թէ ինքն էլ հետն է էրւում. . . Զարերն էլ որ ըլլն, միթէ Աստւած չի պատժիլ մարդի: Էլ ինչ ես կարդացել, որ էդքանն էլ չես իմանում: Նաբուգողոնոսորը եզր ըդառանաւ, մեր

լաւ ծեծեն, բայց որ իմանում են, թէ գէլ է եղել, նոր է մարդ դառել, տանում են իրանց մօտ հաց ուտեցնում, ճանապարհ գցում:

—Ա.Շ թէ խարել է հա . . . բացագանցեց Արութիւնը: Նա հէնց մարդ է եղել եւ ոչ թէ գէլ, բայց որ գողութիւնը բռնըւել է, ասել է՝ գէլ էի. յիմար չօբաններն էլ հաւատացել են, էդ բանը տարածել ժողովրդի մէջ: Խելօք մարդն էդպէս բաներին ինչպէս կըհաւատայ. մարդն ինչպէս գէլ կըդառնայ. . .

—Դու որ չես հասկանում, հէնց իմանում ես, թէ չի դառնալ. ինչի՞ չի դառնալ: Զարերն ինչ ասես, որ չանեն: Մեր Ասրոնց հարսը գէլ չէր դառել, հարեւանների երեխէքը կերել. նրան չէր, որ բռնեցին, գէլի մորթին գցեցին թոնիրը, որ քիչ էր մնացել, թէ ինքն էլ հետն ընկնի կրակը. բղաւում է եղել, «վայ, էրւեցի, էրւեցի» . . . գէլի մորթին որ էրւում է, նա հէնց իմանում է, թէ ինքն էլ հետն է էրւում. . . Զարերն էլ որ ըլլն, միթէ Աստւած չի պատժիլ մարդի: Էլ ինչ ես կարդացել, որ էդքանն էլ չես իմանում: Նաբուգողոնոսորը եզր ըդառանաւ, մեր

Տրդատը խոզ չի դառնաւ, որ Գրիգոր Լուսաւորիչը նորմէկանց մարդ շինեց, բայց մի ականջը նշան թողեց, որ քեզ պէս թերահաւատները մտիկ տան, իրանց աչքով տեսնեն, որ չառեն սուտ էր . . .

—Ի հարկէ՝ սուտ էր: Տրդատը խոզ չի դառել, բայց գժւել է՝ իր հաւատը փոխել, սուտ բաների հաւատացել, գնացել ընկել մի քարափի մէջ, որ ճգնըւի . . .

—Հա ա՞ . . . Եղ վաղ կասէիր է, որ էլ քեզ հետ ըրխօսէի: Ենդուր են ասել, թէ առաջ շատ կարդացողը կրթուրքանայ է . . . Դու թուրքից էլ բէթար ես դառել—ոչ աչքով տեսածին ես հաւատում; ոչ ականջով լսածին, ոչ ինձ, ոչ Այսմաւուրքին, էլ քեզ հետ ի՞նչպէս խօսի մարդ:

—Դու ե՞րբ ես մի ուղիղ բան ասել, որ խելքը գլխին մարդը հաւատայ. որտեղ մի սուտ ես լսել, բոլորն էլ գլուխդ ես հաւաքել, կարծում ես թէ էլ քեզանից շատ բան գիտցող, քեզանից խելօք մարդ ըլկայ աշխարհքիս երեսին:

Աւետիքի զարմացումը յաղթեց նրա բարկութեանը. նա չուզեց հաւատալ, որ այդ-

անակնկալ գնտակը դէպի նրան ձգեց իր իսկ որդին, ուստի եւ շարունակեց,

—Քեզ ի՞նչ ասեմ, դու գժւել ես. դու ինքդ էլ ըզգիտես, թէ ի՞նչ ես ասում, ում հետ ես խօսում: Թուրքը լաւ է ասել, թէ «Ենակէս թուրք դառար, որ հօրդ խաչն էլ ըմբանաչեցի՞ր»: Բայց դու էնպէս ես թուրքացել, որ ոչ թէ հօրդ խաչը, այլ նոյն իսկ հօրդ էլ չես ճանաչում . . . Անյ, վայ . . . Եղ ո՞ր Աւետարանի մէջ է գրած, որ հօրերեսին Եղ տեսակ համարձակ խօսքեր ասեն: Պէս պատասխանիր՝ տեսնեմ, գրի սեւն ու սիսլտակը դու ես ջոկում . . .

—Դու Աւետարանի հաւատում Ես. քեզ պէտք է Այսմաւուրքից ասեն, կամ Պղնձէ քաղաքի յիմար պատմութիւնիցն ու յիմար Խիկարի խրատներիցը, որ դու հաւատաս:

—Եղ լմւ է, Խիկարին էլ չես հաւանում: յանկարծ Սօղօմծն իմաստուն ըլվինիս դառած . . . Գիտես ի՞նչ կայ, խելօք մարդն իր ասելիք խօսքը առաջ մաքումը կըդատի, էնպէս, ինչպէս որ թուզունն իր ձագը կըշահացնի, որ խօսքը բերնիցը գուրս գայ թէ չէ՝ շահ ձա-

գի նման թռչի, վեր ընկնի՝ տկոռ ձագի նման՝ մարդի ոտքի տակ ընկնի . . . Դու էն-պէս խօսքեր ես ասում, որ մեր տաւարած կիւրին էլ չի ասիլ. սրան մտիկ տըւէք, Խիւկարին էլ չի հաւանում . . . Ավանս, ափսո՞ս կորցրած ժամանակ, մինչեւ հիմի եթէ մեր տանը կացած լինէիր, գոնէ հիմի մէկ օրինաւոր տաւարած կըլինէիր. գնան, գնան էգուց մեր տաւարը պահիր, քեզանից գիտուն մարդ չի գուրս գալ . . .

— Ի հարկէ, որ ես էլ քեզ նման սուստ ու մուտ մասալներով խօսեմ, էն ժամանակն ինձ գիտուն կըհամարես: Աստւած քեզ մի ճարտար ու սրախօս լեզու է տրւել, բայց սրասումի մի քիչ սէր, մի քիչ գութ չի գրել: Դու, զորդ է, հաւ չես մորթում; թէ արիւն չեմ ուզում անիլ, բայց մի եւ նոյն ժամանակ սրգեսպանութիւն ես անում . . . Ես հիմն լաւ ճանաչեցի քեզ. քո գլուխը ծուռ ու մուռ գաղափարներով է լցւել, էլ ուղիղ մտիի, ուղիղ գաղափարի համար տեղ չի մնացել . . .

— Եղբայր որ դու ինձ էլպէս ես ճա-նաչել, գնա ուրեմն իմ տանիցս, էլ ինձ մօտ

մի կենալ. վեր կաց, վեր կաց կորիր . . . Հա-կառակի սիւս որտեղից եկաւ էլի քաջքերը մօդ արաւ գլխիս, մազուլ մեզ համար հան-դարտ նստած էինք . . .


— Քաջքեր էլ ունի՞ս, ինչ տեսակ զադեր են էդ քաջքերը . . .

— Դէ հաւամզագա, գուրս, գուրս իմ տանիցը. գնա կորի, էլ աչքիս չերեւաս . . .

Սրութիւնն էլ ժամանակ ըլկորցրեց, ըլս-պասեց, որ հայրը նրան մէկ լաւ մկրտէր: Առանց ուշք գարձնելու մօր արտասուքին՝ ձեռքը ձգեց կախ տւած զէնքերը, որոնց վրայ վաղուց աչք էր դրել, ու գուրս փախաւ: Հոխիսիմէի ձայնը լսեցին գեղամիջի մարդիկը եւ հասան աղատեցին մեր ճգնաւոր գառած Աւետիքի ձեռից: Արութիւնը յիմացաւ այս, նա գնանց, կորաւ . . .

*
ՎԵՐԶ ԵՐԿՐՈՌԴ ԳՐԵԼՑԿԻ ԽՈՎՅ





ՀՀ Ազգային գրադարան



NL0585557

ՀՀ Ազգային գրադարան



NL0585556

ՀՀ Ազգային գրադարան



NL0585555

